

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
«ԳԵՂԱՐԴ» ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
«ՕՐԲԵԼԻ» ԿԵՆՏՐՈՆ**

**Միջազգային գիտաժողով**

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ  
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ.  
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**28-30 մարտի, 2024 թ., Երևան**

**ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

**ԵՐԵՎԱՆ 2024**

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
НАУЧНО-АНАЛИТИЧЕСКИЙ ФОНД «ГЕГАРД»  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ЦЕНТР «ОРБЕЛИ»**

**Международная научная конференция**

**АРМЕНИЯ КАК  
ЦИВИЛИЗАЦИОННЫЙ  
ПЕРЕКРЕСТОК: ИСТОРИКО-  
КУЛЬТУРНЫЕ СВЯЗИ**

**28–30 марта 2024 г. Ереван**

**ТЕЗИСЫ ДОКЛАДОВ**

**ЕРЕВАН 2024**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF  
THE REPUBLIC OF ARMENIA  
“GEGHARD” SCIENTIFIC ANALYTICAL FOUNDATION  
YEREVAN STATE UNIVERSITY  
“ORBELI” CENTER**

**International conference**

**ARMENIA AS A CIVILIZATIONAL  
CROSSROAD: HISTORICAL AND  
CULTURAL TIES**

**March 28–30, 2024, Yerevan**

**ABSTRACTS OF REPORTS**

**YEREVAN 2024**

## **Խմբագրական հանձնաժողով**

*Ռոբերտ Ղազարյան, Մխիթար Գաբրիելյան,  
Միքայել Յալանուզյան, Գոռ Մարգարյան, Հայկուհի Մուրադյան,  
Արտակ Մաղալյան, Հակոբ Մուրադյան, Գայանե Ափոյան*

«Հայաստանը որպես քաղաքակրթական խաչմերուկ. պատմամշակութային առնչություններ» միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ: Երևան, Երևան.– 2024, 168 էջ:

Ժողովաձուն ընդգրկում է «Հայաստանը որպես քաղաքակրթական խաչմերուկ. պատմամշակութային առնչություններ» միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթները:

Նախատեսված է հայագետների, արևելագետների, միջազգայնագետների և հայագիտությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ  
CONTENT

<b>Ալեքսան Հակոբյան</b> , Երևանի և Կոզեռն-Կոնդի վաղ միջնադարի ամրոցները Գետառի ափերին .....	13
<b>Անուշ Սաֆարյան</b> , Արցախի անկախության հուշարձանները հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում .....	15
<b>Աշոտ Հայրունի</b> , Կարսի անկումը 1920 թ. և դրա պատճառները նոր քննարկման լույսի ներքո .....	16
<b>Արմեն Ներսիսյան</b> , Հայաստանը որպես քաղաքակրթական երկխոսության կենտրոն: Հնարավորությունների գնահատումը «Մերձավոր Արևելք – Ընդհանուր Տուն» քաղաքակրթական նախագծի համատեքստում .....	19
<b>Արմինե Հայրապետյան</b> , Մելիք Եգանի արձանագրության մեջ հիշատակված Քոչիզի մելիքությունն ու Մելիք Փաշայանների տոհմը .....	21
<b>Գագիկ Ավետիսյան</b> , Հայկական մշակութային ժառանգության դերն ու նշանակությունը պատկերագրման գործընթացում .....	22
<b>Դիանա Ղազարյան</b> , Երուսաղեմի հայկական լուսանկարչական ժառանգությունը որպես ներկա մարտահրավերներին հակադարձող վկայություն .....	23
<b>Իվեթ Թաջարյան, Գրեգրա Գասպարյան</b> , Նոր Ջուղայի խոջայական ապարանքները որպես ճարտարապետական ժառանգության առանձնահատկությունների ուսումնասիրման աղբյուր .....	25
<b>Իրինա Բադալյան</b> , Ժողովրդագրական գործընթացները Հյուսիսային Կովկասի հայկական և ադրբեջանական համայնքներում (1991–2022 թթ.) .....	26
<b>Խաչատուր Սյրեփանյան</b> , Ռուբեն Տեր-Մինասյանի «Կիլիկիան, Անտիոքը, Ամանոսը որպես միջազգային ճանապարհների հանգույց» մեծարժեք աշխատությունը .....	29
<b>Կարեն Մկրտչյան</b> , Հայության մասին ակնարկներն իրանական խոսույթում .....	31

<b>Հակոբ Միմոնյան</b> , Հայաստան-Իրան. փոխառնչություններ բրոնզի դարում .....	33
<b>Համլեթ Պեպրոսյան</b> , «Աղվանական համախտանիշ». Խորհրդահայ հայագիտությունն ընդդեմ հայ մշակութային ժառանգության աղբրեջանական բռնալուրացման (20-րդ դարի 60–80-ական թվականներ) .....	34
<b>Համո Սուքիասյան</b> , Տարածքային-սահմանային խնդիրների նշանակությունը Վրաստանի և Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերություններում (1918–1920 թթ.) .....	37
<b>Հայկուհի Մուրադյան</b> , Մշակույթի գործոնն Ադրբեջանի արտաքին քաղաքականության համատեքստում .....	39
<b>Հարություն Խուդանյան</b> , Նախկին Կովկասյան թանգարանի հայկական պատմամշակութային ժառանգության պահպանությունը Ս. Ջանաշիայի անվան Վրաստանի պետական թանգարանում .....	40
<b>Հրանուշ Խառապյան</b> , Այսպես կոչված «աղբրեջանցիների դեպորտացիան» Հայաստանից 1947–1950 թթ. աղբրեջանական նոր ինքնության կառուցման կեղծարարության հոլովույթում .....	42
<b>Մարգո Զազյան</b> , ՀՀ-ԻԻՀ համագործակցությունն էներգետիկ ոլորտում .....	45
<b>Մարիամ Պեպրոսյան</b> , Պատերազմական լուսանկարչությունը որպես պատմության վավերացման կարևոր սկզբնաղբյուր. լուսանկարի լոկալ և քաղաքակրթական արժեքը .....	47
<b>Մելինե Անումյան</b> , Թուրքիայի քաղաքականությունը հայկական ճարտարապետական ժառանգության նկատմամբ .....	48
<b>Միքայել Յալանուզյան</b> , Պանթյուրքիզմի և պանիսլամիզմի խոսույթը 1988–1989 թթ. հայկական մամուլում և տպագիր ոչ պաշտոնական օրգաններում .....	51
<b>Մխիթար Գաբրիելյան</b> , Հայկական մշակութային ժառանգության «քարտեզագրման» խնդիրը Կովկասում. ազգաբանական դիտանկյուն .....	53
<b>Նելլի Մինասյան</b> , Հարավային Կովկասը Թուրքիայի պանթյուրքական ծրագրերում .....	55

<b>Ռուբեն Հովսեփյան</b> , Արցախի իսլամական հուշարձանների հետազոտության և պահպանության խնդիրները .....	57
<b>Վահագն Ասրյան</b> , Ռուսական տեսակետը ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկի» մասին .....	60
<b>Վահե Ավերիսյան</b> , Կիլիկյան հայկական թագավորության դերը միջքրիստոնեական երկխոսության մեջ .....	61
<b>Վահրամ Բալայան</b> , Շուշիի հայ արդյունաբերողների դերը տարածաշրջանի երկրների և բնակավայրերի հետ տնտեսական կապերի ամրապնդման գործում (1813–1920 թթ.) .....	64
<b>Վանիկ Վիրաբյան</b> , Հայաստանի առաջին Հանրապետության անկումը. ՀՀ արտաքին-քաղաքական հաշվարկների ձախողումը .....	66
<b>Վարդգես Սաֆարյան</b> , Հնագիտական հետազոտություններն Արցախում 44-օրյա պատերազմից հետո (2021–2023 թթ.) .....	68
<b>Վիլեն Գաբրիելյան</b> , Ցարական Բաքուն որպես հայկական կապիտալի ներդրման կենտրոն. պատմություն և իրավունք .....	70
<b>Տարոն Հակոբյան</b> , Քաղաքական գործընթացներն Արցախում (1986–1992 թթ.) .....	72
<b>Տիրուհի Բայրությունյան</b> , Ադրբեջանի պատմության կերտումը և տեղաբնիկության թեզերի առաջաջումը 1940-ական թթ. խորհրդային պատմագրության կողմից (Ի.Պ. Պետրուշևսկիի օրինակով) .....	73
<b>Քնարիկ Ավագյան</b> , Ճգնաժամերը Մերձավոր Արևելքի երկրներում որպես սիյուրքահայերի Հայաստան հայրենադարձության խթան (2000-ական թթ.) .....	75
<b>Александр Акоюн, Лусине Гуцян</b> , Между культурами и эпохами: биография вещи на примере одного армянского шейно-нагрудного украшения .....	78
<b>Андрей Бедрик</b> , Историческая родина в сохранении этнокультурной идентичности армянской общины Ростовской области .....	80
<b>Андрей Тихомиров</b> , Армяне в Беларуси: от великого княжества Литовского до современности .....	83

<b>Артак Магалян</b> , Фальсификация истории меликств Арцаха в Азербайджанской историографии .....	84
<b>Бао Йи</b> , Региональное культурное сотрудничество с опытом сотрудничества Китая в рамках ШОС .....	85
<b>Ван Джин</b> , Российско-китайское финансовое сотрудничество. Потенциальные возможности Армении .....	86
<b>Вачаган Чолахян</b> , Армения как межцивилизационная площадка диалога в Евразийском пространстве .....	88
<b>Гариб Бабаян, Диана Оганян, Лина Барсебян</b> , Геополитическая трансформация Закавказья после четвертой азербайджано-карабахской войны .....	91
<b>Гаяне Махмуран</b> , В 1918–1920 годах Республика Армения в центре политических противоречий между США, Великобританией и Францией .....	95
<b>Геворг Казарян</b> , Хай-хоромы (православные армяне) в водовороте геноцида армян и малозайской катастрофы .....	97
<b>Давит Мерквиладзе</b> , Искажение данных из работ полковника Бурнашева в книге, изданной в Баку .....	98
<b>Елена Джагацпанян</b> , Джуга-Новая Джуга. История переселения города .....	100
<b>Зарифа Цаллагова</b> , Национальный героический эпос как содержательная основа этнокультурного образования («Давид сасунский» и «Нарты») .....	102
<b>Кристина Оганнисян</b> , Воспоминания и судьбы жертв бакинского и сумгаитского погромов после переезда в Ставропольский край .....	104
<b>Лаврентий Джаниашвили</b> , Семейно-родственные отношения Армянского населения проживавшего в Южной Грузии .....	105
<b>Лариса Цвижба</b> , Армяне в Абхазии: История и современность .....	107
<b>Максим Васьяков</b> , Армения в системе глобальных и региональных политических процессов: Вызовы и перспективы .....	109
<b>Мария Братолюбова</b> , Нахичевань - На-Дону. роль донских армян в социокультурном и экономическом развитии юга России (по воспоминаниям современников XIX–нач. XX вв.) .....	110



<b>Николай Джавახишвили</b> , Закавказская унифицированная финансовая система (1918–1919 и 1923–1924 гг.) .....	112
<b>Рамазан Абдулмажидов</b> , О контактах Иосифа Эмина с правителем Аварского нуцальства - Мухаммад-Нуцалом (XVIII в.) .....	114
<b>Руслан Кобзарь</b> , К вопросу о локализации «70 долин» (Strabo, XI, 14, 15) .....	116
<b>Тимур Айтберов</b> , Карабах и карабахские армяне в Аварских исторических источниках .....	118
<b>Шахбан Хапизов</b> , О роли Армении в распространении христианства в Дагестане (VII–X вв.) .....	121
<b>Alyson Wharton</b> , Collecting the world: Armenian antiquities dealers and museum collections in Europe and North America at the turn of the 20th century .....	123
<b>Amir Mohammad Mohani</b> , Geopolitical realities of South Caucasus: Implication of Iran-Armenia relations .....	124
<b>Arà Zarian</b> , Wall paintings in Armenian churches and their historical and cultural relations .....	127
<b>Armine Mnatsakanyan</b> , Historical narratives in the museums of Soviet Armenia: a case study on the state revolution .....	129
<b>Atef Saadafi</b> , Armenia and the Middle East: The necessary role of cultural diplomacy .....	130
<b>Beka Chedia</b> , Formation of a new foreign policy identity of Armenia and the prospect of strategic partnership with Georgia in the context of Europeanization of the Caucasus region .....	131
<b>Chang Liu</b> , The rise of civilizational narratives on a global scale .....	133
<b>Christine Lamoureux</b> , The wall paintings of the 7th century in Armenia the case of Lmbatavank: Sources comparisons, influences, with older, contemporary and subsequent depictions in the Eastern Christian world and in Italy .....	134
<b>Chunming Zu</b> , What does the “Period of cultural change” mean for China and Armenia? .....	136

<b>Dewen Tian</b> , Another possibility of international relations .....	137
<b>Elisa von Joeden-Forgey</b> , Armenia as a global leader in genocide prevention .....	138
<b>Gagik Chilingaryan</b> , Norms of the Council of Europe in the Postsoviet space: National minorities in the Republic of Armenia and FCNM .....	139
<b>Giorgi Tcheishvili</b> , Georgia and Georgians in the 13th century: Etermination by selves and others .....	141
<b>George Sanikidze, Tamar Tekveishvili</b> , Materials concerning Armenians and Armenia in the French magazine “Le Caucase illustre” published in Tbilisi (1889–1892, 1899–1902) .....	142
<b>Grigol Pheradze, Manana Javakhishvili</b> , Caucasian policy and unification attempts in the 1760s: a historical analysis .....	144
<b>Hovik Avanesov</b> , Azerbaijan policy of Albanization of the Armenian cultural heritage and mechanisms to counter it .....	146
<b>Kima Saribekyan</b> , Perspectives on power: the First Republic of Armenia and Mmiddle East .....	148
<b>Lilit Saghatelyan</b> , Historical citizenship in the Soviet border region: Armenians of Nakhijevan .....	149
<b>Mahesh Ranjan Debata</b> , India-Armenia relations in the post-cold war period .....	151
<b>Marianna Manasyan</b> , Images und perceptions of Armenia in diaspora Armenian films .....	153
<b>Masayuki Ishimoto</b> , The role and connections of Armenian Catholics as a crossroad of civilizations in the 19th century and the early 20th century .....	154
<b>Mikhail Ilchenko</b> , On the cutting edge of modernity: New public perceptions of the modernist urban legacy in Armenia .....	156
<b>Mou Wang</b> , Ecological civilization in China: From concept to practice .....	157
<b>Nona Shahnazaryan</b> , Armenia’s frontiers: Convergent border zonas as a locus of syncretism .....	158

<b><i>Péter Récsei</i></b> , Imagined nations - cultural memory of the Caucasus .....	159
<b><i>Seyyed Hosein Tabatabaei</i></b> , The role of Armenians in the modernization of Iranian art .....	160
<b><i>Shinnosuke Matsui</i></b> , The influence of Armenian traditional weaving techniques on the mode- “Trompe-l’œli sweater” by Schiaparelli .....	161
<b><i>Tessa Savvidis (Hofmann)</i></b> , Reflections on Armenia as a crossroad of civilizations .....	162
<b><i>Vilen Mnatsakanyan</i></b> , Armenia’s strategic role in regional economic dynamics: a bridge between north and south, east and west .....	165
<b><i>Wei Fu</i></b> , Rural industry and Chinese path to modernization .....	167



**Ալեքսան Հակոբյան (Հայաստան, Երևան)  
ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ԿՈՋԵՌՆ-ԿՈՆԵԴԻ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ  
ԱՄՐՈՑՆԵՐԸ ԳԵՏԱՌԻ ԱՓԵՐԻՆ**

**Алексан Акопян (Армения, Ереван)  
РАННЕСРЕДНЕВЕКОВЫЕ КРЕПОСТИ ЕРЕВАНА И  
КОЗЕРН-КОНДА НА БЕРЕГУ РЕКИ ГЕТАР**

**Aleksan Hakobyan (Armenia, Yerevan)  
EARLY MEDIEVAL FORTRESSES OF YEREVAN AND  
KOZERN-KOND ON THE BANKS OF THE GETAR RIVER**

Սասանեան Իրանն ու Բիզանդական կայսրութիւնը Հայաստանի եւ Միջագետքի երկրորդ բաժանման ժամանակ եւս իրար դիմաց սահմանային ամրոցներ էին կառուցում, որոնք իր յաջողութեան դէպքում ախոյեանն աւիրում էր (Դարա-Մծբին, Կիթառիճ-Ափում, Քղիմար-Նփրկերտ, Կայծոն-Կայեան եւն): Ըստ ամենայնի՝ Երեւանի բերդը եւս՝ ներկայիս Գինու գործարանի տեղում, մեծ չափերով, բայց, ըստ էութեան՝ բաց դաշտում (լոկ արեւմուտքից ու հիւսիսից բնական պաշտպանուած) կառուցուել է 591 թ. երկրորդ բաժանումից յետոյ՝ Հրազդանով ու Գետառի հին հունով անցնող նոր սահմանագծի վրայ՝ Սասանեան Խոսրով Բ Ապրուէզ արքայի հրամանով (եւ հայ շինարարների ձեռքով): Նրա դիմաց էլ՝ Կոնդի բլրի հարաւային գագաթին Մարիկիոս կայսրն էր իր բերդը կառուցել, թերեւս, «Կոզեռն» յունահունչ անուամբ (Պտղոմէոսի «Աշխարհագրութեան» մէջ այդ բնակավայրը կոչւում էր «Կոզառա»), որը յետոյ ժողովուրդը ստուգաբանեց «Կոզեռն» իմաստով, արաբերէն՝ «ուղտի ձագ»: Սասանեան բերդի կառուցումը Էրեբունէ-Երեւան քաղաքի համայնքային հողերի հիւսիսային եզրին պատճառ է դարձել, որպէսզի կազմակերպուի վերջինիս բնակչութեան տեղափոխումը Արինբերդի շրջակայքից նոր ամրոցի յարակից տարածք՝ ներկայիս կենտրոնով դէպի Յաղթանակի կամուրջ հոսող Գետառի ափերը, որտեղ նախկինում լոկ Էրեբունէ եւ Կոզառա

համայնքների այգիներն էին: Նոր ամրոցը հետագայում բազմիցս ամրացուել է, այդ թւում՝ ԺԵ-ԺԷ դդ. մահմեդական տիրակալների կողմից (օրինակ՝ 1583 թ. Օսմանեան զօրավար Ֆարհադ փաշան վերաշինել է դէպի Իրան ուղղուած հարաւային պարիսպը):

610 թ. յետոյ Սասանեան արքայի յաղթական բանակները, որոնց շարքում հայոց գունդը «Վրկանի մարզպան» Սմբատ Բագրատունու հրամանատարութամբ, բիզանդացիներին քշեցին մինչեւ Կոստանդնուպոլիս ու Եգիպտոս, իսկ «նրանց» Կոզեռնի բերդը քանդեցին: Փոխարէնը՝ առաջին «իշխան Հայոց» նշանակուած Սմբատը ձեռնարկեց, թերեւս, իր նստոցը դարձած «նոր» Երեւանի՝ հռոմէական ոճով շքեղ կառուցապատումը («Պօղոս-Պետրոս» եռանաւ բազիլիկ տաճարով եւն) Գետառի ափերին, որի հունն էլ տեղափոխուեց դէպի Այգեստանի բլուրների ստորոտի հեղեղատները եւ Ջրվէժ վտակ (կենտրոնում թողնուեց լոկ քաղաքի այգիներն ու բերդի խանդակը ջրով մատակարարող մի ջրանցք-առու): 1679 թ. աւերիչ երկրաշարժից յետոյ Սեֆեան շահերի հրամանով Երեւանը վերականգնող խանական-կուսակալական վարչակազմը Կոնդի բլրի վրայի կէս կմ երկարութամբ, կիսաշրջանաձեւ, մէկ շարքով, 12 մ լայնութամբ եւ մինչեւ 1,5 մ հաստութամբ պատերով (նկուղներում) խանական ու մելիքական տները, մեդրեսէն, բաղնիքը եւն կառուցել է, ենթադրաբար՝ հէնց բիզանդական բերդի պարիսպներից մնացած քարէ հիմքերի վրայ: Այդ շարքն աւարտուում է ամենահարաւում յառնող թեք լանջին 1687 թ. Հաջի Նովրուզ Ալիբէկի վերակառուցած պարսկական մզկիթի համալիրով, որի մի յարակից շինութեան հիմքերի վրայ կանգնած է թում 1672-1673 թթ. ֆրանսիացի ուղեգիր Ժ. Շարդէնի պատկերած «Երեւանի հին աշտարակը» («Tour antique à Irwan»)՝ նոյնպէս պահպանուած 2 դարավերջի բիզանդական բերդից: Յայսօր այն չի դարձել հայ ճարտարապետութեան պատմաբանների

լուրջ քննութեան առարկայ, քանի որ առաջին հայեացքից նման է թուում մահմեդական աշտարակ-դամբարաններին: Իրականում, ինչպէս բազմաթիւ զուգահեռներով փաստարկել է Ա. Միքայելեանը, Ժ.Շարդէնի նկարած կառոյցը եղել է մի եզակի ջրի պահեստարան-աշտարակ (water tower):

**Անուշ Սաֆարյան** (Հայաստան, Երևան)  
ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ  
ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

**Ануш Сафарян** (Армения, Ереван)  
ПАМЯТНИКИ НЕЗАВИСИМОСТИ АРЦАХА В КОНТЕКСТЕ  
АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКОГО КОНФЛИКТА

**Anush Safaryan** (Armenia, Yerevan)  
ARTSAKH MONUMENTS OF INDEPENDENCE IN THE CONTEXT  
OF THE ARMENIAN-AZERBAIJANI CONFLICT

Արցախի ժամանակակից հուշարձանային մշակույթը նոր և հետաքրքիր երևույթ է, որն արտացոլում է Արցախի ինքնութենական կերպարը: Խորհրդային տարիների առաջին տասնամյակներում, եթե չհաշվենք բոլշևիկյան որոշ գործիչներին նվիրված հուշարձանները (Ստեփան Շահումյան և այլն), Արցախում հուշարձանաշինությունը այնքան էլ մեծ ծավալներ չուներ: Իրավիճակը փոխվեց Հայրենական մեծ պատերազմի վերջին տարիներին և պատերազմից հետո: Հայրենական մեծ պատերազմի զոհերին, հերոսներին, անհետ կորածներին և հաղթանակին նվիրված հուշարձանաշինությունը մեծ թափ առավ հատկապես պատերազմից հետո: Այդ հուշարձաններին և հուշահամալիրներին է, որ մեծամասամբ կցվեցին նաև Արցախյան ազատագրական պատերազմին նվիրված հուշարձանները, որը մեծ թափ ստացավ հատկապես 2000-ական-

ներից հետո: Դրանց թիվը կտրուկ աճեց Քառօրյա և 44-օրյա պատերազմներից հետո:

Անկախության շրջանում ստեղծված այդ մշակույթը այժմ դարձել է ադրբեջանական վանդալության հիմնական թիրախներից մեկը:

Զեկուցման հիմնական նպատակն է ամբողջական պատկերացում տալ հուշարձանային մշակույթը ստեղծող գործոնների մասին ընդհանրապես, և քննել դրանց ունեցած կոնկրետ ազդեցությունը հուշարձանային լանդշաֆտի փոփոխությունների և փոխակերպումների վրա:

Հիմնական խնդիրներն են ներկայացնել խորհրդային կարգերից անկախության անցման, Արցախյան հարցի ու երեք պատերազմների, սոցիալական և քաղաքական բարդ իրավիճակների արտացոլումը մշակութային լանդշաֆտում: Համապատասխանաբար մանրամասն կքննվեն Արցախյան պատերազմների և հատկապես Ազատագրական պատերազմի ազդեցությունը լանդշաֆտի վրա («հուշարձանացումը», հուշադրյուրների և հուշարձանների տեղափոխումը, Ադրբեջանի վանդալիզմը):

### **Աշոտ Հայրունի** (Հայաստան, Երևան)

ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ԴՐԱ

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՆՈՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

### **Ашот Айруни** (Армения, Ереван)

ПАДЕНИЕ КАРСА В 1920 ГОДУ И ЕГО ПРИЧИНЫ В СВЕТЕ  
НОВОЙ ДИСКУССИИ

### **Ashot Hayruni** (Armenia, Yerevan)

THE FALL OF KARS IN 1920 AND ITS REASONS IN THE LIGHT  
OF THE NEW DISCUSSION

1920 թ. Կարսի անկմանը և դրա պատճառներին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, սակայն հարցը դեռևս



բավականաչափ պարզաբանված չէ: Ավելին, ժամանակի ընթացքում ի հայտ եկած որոշ տեսակետներ, քննություն չբռնելով, ենթակա են սրբագրման: Մյուս կողմից՝ տեղի ունեցած իրադարձությունները բազմաթիվ դեպքերում դիտարկվել և գնահատվել են՝ առանց պատճառահետևանքային առնչություններին բավականաչափ ուշադրություն հատկացնելու: Կարսի ճակատում հայկական բանակի և թվաքանակը, և՛ սպառազինությունը, և՛ ընդհանուր առմամբ, մարտական փորձառությունը լիովին բավարար էին թուրքերի դեմ հաղթական պատերազմ վարելու համար, որն անկասկած, տեղի կունենար, եթե այդ բանակն ունենար բանիմաց զորահրամանատարներ, չբարոյալքվեր և կռվեր:

Որպես բանակի բարոյալքման գլխավոր պատճառ՝ սովորաբար մատնանշվել է հայկական զորամասերում բոլշևիկյան քարոզչության առկայությունը, մինչդեռ այդպիսի՝ քիչ թե շատ նշանակալից քարոզչություն առկա չի եղել: Ինչպես փաստում են նորահայտ սկզբնաղբյուրները, հայկական բանակի բարոյալքումը պայմանավորված էր գլխավորապես տեղի հայ զորահրամանատարության ապիկարությամբ, նաև՝ ռազմական նախարարի անձեռնհասությամբ ու ամենաթողությամբ:

Հիմնավոր չեն կարող համարվել նաև այն տեսակետները, թե հայկական բանակի մարտունակության բացակայությունը պայմանավորված էր հայ զինվորների՝ Անգլիայից ուղարկված կանադական արտադրության՝ «Ռոսս» հրացաններին չտիրապետելու հանգամանքով, քանի որ այդ հրացանների գործածությանը զինվորներին ծանոթացնելու բավականաչափ ժամանակ կար: Կարսի բարձրագույն զորահրամանատարությունը ներկայացնող Հարություն Հովսեփյանը և Դանիել Բեկ-Փիրումյանը, որոնք նաև ռազմական գործողությունների անմիջական պատասխանատուներն էին, ոչ միայն ոչինչ չեն արել Կարսի պաշտպանունակությունն ապահովելու

համար, այլև չունենին այն նվազագույն հեղինակությունը, որ անհրաժեշտ էր զորքը կռվի առաջնորդելու համար:

Անգամ Կարսի համար ստեղծված բախտորոշ իրադրությունում նրանք զբաղված էին իրենց և իրենց մերձավորների անձնական ունեցվածքը փրկելու գործով:

Նահանգում տիրում էր կատարյալ քաոս: Այն, որ անգլիացիների կողմից Կարսի նահանգը հանրապետությանը միացնելուց հետո Թուրքիայի և Վրաստանի հետ նահանգի ամբողջ սահմանը մեկ տարի շարունակ միանգամայն բաց և անպաշտպան էր մնում, ու Հայաստանի կառավարությունը սահմանագիծը միայն 1920 թ. զբաղեցրեց, ցույց է տալիս, թե, մեղմ ասած, որքան անհոգ են գտնվել ՀՀ կառավարությունն ու Կարսի զորահրամանատարները նաև այդ հարցում:

Հոգ չտանելով նահանգի պաշտպանունակության ամրապնդման մասին, վերջիններս փոխարենը զբաղված էին թալանով, որի թիրախն էին դառնում նաև քաղաքի և բերդի պաշտպանության համար կենսական նշանակություն ունեցող նյութատեխնիկական միջոցները, մինչև իսկ ավտոմեքենաները և հեռագրական ու հեռախոսային կապի միջոցները:

Այդ զորահրամանատարների, ինչպես և Կարսի նահանգի այլ պաշտոնյաների բազմաթիվ անօրինականությունների մասին ամիսներ շարունակ նահանգապետի կողմից տեղեկագրեր էին ուղարկվում ՀՀ կառավարությանն ու մասնավորապես ռազմական նախարարին, սակայն վերջիններիս կողմից ոչինչ չի ձեռնարկվել իրադրությունը շտկելու կամ գեթ Կարսի հրամանատարական կազմը փոխելու համար: Ինչպես փաստում է հարցի ուսումնասիրությունը, դրա առանցքային պատճառներից մեկը ՀՀ կառավարման համակարգում որոշակի տարածում ունեցող կուսակցական հովանավորչությունն էր, որին շատ դեպքերում ստորադասվել են պետական շահն ու պետական մտածողությունը:

**Արմեն Ներսիսյան** (Հայաստան, Գյումրի)  
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ  
ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ: ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ «ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ – ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՏՈՒՆ» ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**Армен Нерсисян** (Армения, Гюмри)  
АРМЕНИЯ КАК ЦЕНТР ЦИВИЛИЗАЦИОННОГО  
ДИАЛОГА. ОЦЕНКА ВОЗМОЖНОСТЕЙ В КОНТЕКСТЕ  
ЦИВИЛИЗАЦИОННОГО ПРОЕКТА  
«БЛИЖНИЙ ВОСТОК – ОБЩИЙ ДОМ»

**Armen Nersisyan** (Armenia, Gyumri)  
ARMENIA AS A CENTER OF CIVILIZATIONAL DIALOGUE.  
ASSESSMENT OF OPPORTUNITIES IN THE CONTEXT OF THE  
“MIDDLE EAST – COMMON HOME” CIVILIZATIONAL PROJECT

Ապագա Աշխարհակարգի ձևավորման ընթացքում՝ մեզո տարածաշրջաններում, աշխատաքաղաքական ստատուս քվին պետք է հաստատվի ավտոխտոն ժողովուրդների սոցիալ-քնական կենսագործունեությունն ապահովող անվտանգային առաջնահերթությամբ: Այս ասպեկտում առաջնահերթ նշանակություն է ստանում տարածաշրջանի եկվոր էթնիկ խմբերի էքսպանսիոն հավակնությունների չեզոքացումը: Հետևաբար, Ապագա Աշխարհակարգի հիմքը պետք է կազմեն քաղաքակրթական (Արարչակրթական) անվտանգության տարածաշրջանային գոտիները, որոնք և պետք է դիմակայեն քանդող (ավերող, սպառող, կլանող) քաղաքակրթությունների (հակաքաղաքակրթությունների) մարտահրավերներին, և պետք է ապահովեն քաղաքակրթական ժառանգականության ու էներգիայի փոխանակում: Ըստ այդմ, տարածաշրջանային անվտանգության քաղաքակրթական արեալներն Ապագա Աշխարհակարգում կատարելու են քաղաքակրթական հաղորդակցիչի դեր և ապահովելու են համամարդկային քաղաքակրթական

բազմազանության լիարժեք ու ներդաշնակ կենսազարգացումն ամբողջ Երկրագնդով:

Երկրագնդի աշխարհաքաղաքական ապագա կառուցվածքում, նմանատիպ՝ տարածաշրջանային անվտանգության արեալի կարգավիճակի կարող է և պետք է հավակնի Մերձավոր Արևելքը, որը հանդես է գալու որպես ավտոխտոն ժողովուրդների Ընդհանուր Տուն: Ըստ այդմ, ձևավորվելու է անվտանգային այն միջավայրը, որը հնարավորություն է տալու, որպեսզի ավտոխտոն ժողովուրդները լիարժեք կենսագործեն, իսկ դա իր հերթին հնարավորություն կտա քաղաքակրթական հաղորդակցիչի դեր կատարել Նոր Աշխարհակարգի հիմնական բևեռների միջև:

Հետևաբար, այս հայեցակարգը՝ որպես աշխարհաքաղաքական ռեալ ծրագիր, լիարժեք ներդաշնակում է և՛ տարածաշրջանի ավտոխտոն ժողովուրդների, և՛ աշխարհաքաղաքական գլխավոր դերակատարների շահերը:

Ըստ այդմ, աշխարհաքաղաքական գլխավոր ակտորների կողմից ապագա Աշխարհակարգի կայացման համար անհրաժեշտ հաղորդակցման ուղիների (տրանսպորտային, տեղեկատվական և այլն) նախագծման, ծրագրավորման և ճարտարապետման գործընթացներում Մերձավոր Արևելքի քարտեզագրումը բացառապես պետք է բխի վերոնշյալ իրողություններից, այն է՝ բնիկ ժողովուրդների կենսագործունեության լիարժեք ապահովում և թյուրքական էքսպանսիայի բացառում:

Այսպիսով, «Մերձավոր Արևելք-Ընդհանուր Տուն» քաղաքակրթական նախագիծը կարող է դառնալ Հայկական քաղաքակրթության և այն կրող Հայկական պետականության հայտը՝ մասնակցելու արդեն իսկ սկսված և ապագայում խորացող աշխարհաքաղաքական (խորքի մեջ՝ քաղաքակրթական) գործընթացներին: Այն միաժամանակ Հայկական պետականությանը հնարավորություն կտա տեղի ունեցող գործընթացներում մասնակցել լիարժեք սուբյեկտի և պատասխանատու դերակատարի կարգավիճակով:

**Արմինե Հայրապետյան** (Հայաստան, Երևան)  
ՄԵԼԻԻՔ ԵԳԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՔՈՉԻԶԻ ՄԵԼԻԻՔՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ  
ՄԵԼԻԻՔ ՓԱՇԱՅԱՆՆԵՐԻ ՏՈՒՄԸ

**Армине Айрапетян** (Армения, Ереван)  
МЕЛИКСТВО КОЧИЗА И ДИНАСТИЯ МЕЛИК-ПАШАЯНОВ  
УПОМЯНУТАЯ В НАДПИСИ МЕЛИКА ЕГАНА

**Armine Hayrapetyan** (Armenia, Yerevan)  
THE KOCHIZ PRINCIPALITY AND THE MELIK PASHAYAN  
DYNASTY MENTIONED IN THE INSCRIPTION OF MELIK YEGAN

Մատենագիտությունը լռում կամ շատ քիչ է խոսում Մելիք Եգանի ընդունարանի մուտքի բարավորի արձանագրության մեջ հիշատակված Քոչիզի մելիքության ու մելիքական տոհմի՝ Մելիք Փաշայանների մասին: Քոչիզի մելիքությունը ձևավորվել է Դիզակի իշխանության տարածքի մի մասում Մելիք Փաշայանների տոհմի գլխավորությամբ ոչ ուշ, քան 16-րդ դարում: Պատմական ինչ հանգամանքներում են Քոչիզի ու Վարանդայի մելիքությունները միավորվել, սրա մասին նույնպես հստակ տեղեկություններ չկան: Իսկ տեղական բանահյուսության հիմքում հակամարտությունն է, որի արդյունքում Մելիք Շահնազարյանների պատվերով սպանվել է մելիք Փաշիկը: Դրանից հետո մելիք Փաշիկի հաջորդները մելիքությունը հանձնել են Շահնազարյանների տոհմին: Տարօրինակ է նաև Խամսայի այդ մելիքության վերաբերյալ Րաֆֆու լռությունը, իսկ որոշ ուսումնասիրողներ Քոչիզը նույնացրել են Քաշաթաղի Հոչանցի հետ:

**Գագիկ Ավետիսյան** (Հայաստան, Երևան)  
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԿԵՐԱԳՐՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

**Гагик Аветисян** (Армения, Ереван)  
РОЛЬ И ЗНАЧЕНИЕ АРМЯНСКОГО КУЛЬТУРНОГО  
НАСЛЕДИЯ В ИЗОБРАЗИТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ

**Gagik Avetisyan** (Armenia, Yerevan)  
THE ROLE AND SIGNIFICANCE OF THE ARMENIAN CULTURAL  
HERITAGE IN THE ARTISTIC PROCESS

Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս առկա են հայոց հնամենի մի շարք կոթողային շինություններ, որոնց պատշաճ ներկայացումը, դաստիարակչական և զարգացնող առաջնահերթ արժեքներից զատ, կձևավորի նաև հայրենիքի ճանաչողության բարձր մակարդակ և կամրապնդի պահպանության հիմնախնդիրը:

Վերջին աղետալի պատերազմների հետևանքով բռնազավթված Արցախի տարածքում շարունակվում է նաև մշակութային ցեղասպանության քաղաքականությունը՝ իսպառ ջնջելով պատմամշակութային կոթողների հայկականության հետքերը՝ ներկայացնելով դրանք իբրև ուղիական (աղվանական) ժառանգություն: Այդ քարակերտ կոթողները հանդիսանում են Արցախում հայերի հազարամյա պատմության անխոս վկաները, ուստի պատմամշակութային կոթողների ուսումնասիրությունն ու պատկերագրումը կրում է նաև ռազմավարական նշանակություն:

Առկա պատմամշակութային կոթողներից առաջնահերթ պետք է ուսումնասիրել ու պատկերագրել համազգային նշանակություն ունեցող Գանձասարի, Դադիվանքի և Ամարասի վանական համալիրները, որոնք Արցախում հայերի հազարամյակների բնակության լավագույն քարե վկաներն են:

Արցախի ու Նախիջևանի պատմական հուշարձաններից ոչ պակաս մշակութային մեծ արժեք են ներկայացնում նաև Արևմտյան Հայաստանում առկա՝ հիմնականում ավերված հոգևոր և աշխարհիկ կոթողները: Հայաստանի նաև այդ հատվածի՝ հայության բնօրրան լինելու փաստի լուռ վկաներն են տեղի քարեղեն կոթողները: Հայկական պատմամշակութային կոթողների ծանոթացումը, ուսումնասիրումն ու վանդալիզմից պաշտպանելուն միտված գործուն քայլերից ենք համարում կրթական համակարգում վերոնշյալ խնդիրներին անդրադառնալը:

**Դիանա Ղազարյան** (Հունգարիա, Բուդապեշտ)  
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԿԱ  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ՀԱԿԱԴԱՐՁՈՂ ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**Диана Казарян** (Венгрия, Будапешт)  
АРМЯНСКОЕ ФОТОГРАФИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ  
ИЕРУСАЛИМА КАК СВИДЕТЕЛЬСТВО БОРЬБЫ  
С СОВРЕМЕННЫМИ ВЫЗОВАМИ

**Diana Ghazaryan** (Hungary, Budapest)  
THE ARMENIAN PHOTOGRAPHIC HERITAGE OF JERUSALEM  
AS A TESTIMONY AGAINST THE CURRENT CHALLENGES

Պատմությունը կարիք ունի մտապատկերման՝ վիզուալիզացիայի: Ժամանակակից հասարակության կապը պատմության կերտման, վերարտադրման հետ անցնում է լուսանկարչական օբյեկտիվի միջով: Այդպես է շարունակվում նոր շրջանի պատմության ժամանակ տեղի ունեցած տեխնոլոգիական նվաճումներից ի վեր: Լուսանկարչությունը, լինելով «վերարտադրության առաջին իսկական հեղափոխական միջոցը»՝ ըստ գերմանացի փիլիսոփա Վալտեր Բենիամինի, ոչ միայն պատմագիտության, հիշողության հայեցակարգի պատմության, այլև

ընդհանրապես հասկացությունների ձևավորման պատմության հարց է:

Առաջին անգամ Եվրոպայում հայտնաբերված այս արհեստը արագորեն հասավ Օսմանյան կայսրության սահմաններին: Հայերը դարձան այս արհեստի առաջին ջատագովներից: Հայ լուսանկարիչները մեծ հեղինակություն են վայելել հատկապես կայսրության մայրաքաղաք Ստամբուլում:

Ստամբուլի սահմաններից դուրս՝ մասնավորապես Երուսաղեմում, հայկական լուսանկարչության հետքերը նույնպես մնայուն են: Ավելին, դրանք փաստում են, որ հայերն առաջինն էին այդ մասնագիտության մեջ: Հատկանշական է, որ Երուսաղեմի Հայոց պատրիարք Եսայի Կարապետյանը (1825–1885թթ.) համարվում էր Երուսաղեմում լուսանկարչական արհեստի առաջին կիրառողը: Նա հիմնեց փոքրիկ աշխատարան և սկսեց կրթել երիտասարդներին: Հենց այս շարունակականությունն էր, որ երաշխավորեց լուսանկարչական արվեստի զարգացումն ու տարածումը Սուրբ Երկրում: Դրա շնորհիվ հայ լուսանկարիչները փորձեր կատարելու և կատարելագործվելու ավելի շատ ժամանակ ունեցան և այդպիսով կարողացան առանձնահատուկ տեղ զբաղեցնել մերձավորարևելյան լուսանկարչության պատմության մեջ:

Սույն զեկուցումը համապարփակ ձևով ներկայացնում է Երուսաղեմի հայկական լուսանկարչական ժառանգությունը 19–20-րդ դարերում, որպես անցյալում արված, բայց ներկա պատմա-քաղաքական մարտահրավերներին հակադարձող գործիք, Սուրբ Հողում հայերի դարավոր ներկայությունը փաստող հարատևության վկա: Երուսաղեմում Սրբոց Յակոբեանց վանքի և նրա շուրջ ձևավորված համայնքի պատմությանը զուգահեռ կարևոր է վերհանել հայերի ունեցած առանձնահատուկ դերը քաղաքի և տարածաշրջանի մշակութային գունապնակի մեջ՝ մեկ անգամ ևս փաստելով հայերի Սուրբ Հողում գոյության շարունակականության հաստատումը՝ որպես նորագույն Հայաստանի պատմության անբաժանելի մաս:



**Իվեթ Թաջարյան, Գրետա Գասպարյան**  
(Հայաստան, Երևան)  
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԽՈՋԱՅԱԿԱՆ  
ԱՊԱՐԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

**Ивет Таджарян, Грета Гаспарян** (Армения, Ереван)  
ДВОРЦЫ ХОДЖЕЙ НОВОЙ ДЖУГИ КАК ИСТОЧНИК ДЛЯ  
ИЗУЧЕНИЯ ОСОБЕННОСТЕЙ АРХИТЕКТУРНОГО НАСЛЕДИЯ

**Ivet Tajaryan, Greta Gasparyan** (Armenia, Yerevan)  
KHOJAS'S PALACES OF NEW JULFA AS A SOURCE FOR  
STUDYING THE FEATURES OF ARCHITECTURAL HERITAGE

Պատմության ուսումնասիրության համար հիմք են հանդիսանում գրավոր աղբյուրները (պատմիչների երկեր, ձեռագիր մատյաններ, արխիվային փաստաթղթեր), սակայն ոչ միշտ է, որ դրանք կարող են համապարփակ պատկերացում տալ թեմայի ուսումնասիրման վերաբերյալ: Յուրաքանչյուր թեմայի առանձնահատկություններից ելնելով՝ գրավոր աղբյուրներին կարող են լրացնել տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշները, լուսանկարները, մոնումենտալ հուշարձանները և անգամ ոչնչացման եզրին հասած շինությունները:

Շահ Աբբասի օրոք կազմակերպված բռնագաղթից հետո Իրանի նախկին մայրաքաղաք Սպահանի մի հատվածում հանգրվանեցին հայերը և այդպիսով ձևավորվեց հայկական Նոր Զուղա բնակավայրը: Նոր Զուղայի պատմության տարբեր շրջանների մասին են վկայում հայ մեծահարուստ խոջաներին պատկանող առանձնատները: Դրանցից յուրաքանչյուրը իրենց արտաքին և ներքին ձևավորումով, թեմայով ու բովանդակությամբ գալիս է լրացնելու պատմիչների, ճանապարհորդների և ցանկացած գրավոր աղբյուրում բացակայող կամ խնդրահարույց համարվող հարցադրումները:

Զեկուցման շրջանակներում պատմահամեմատական, արվեստաբանական մեթոդների կիրառմամբ ներկայացվելու և քննվելու են Նոր Զուղայի խոջայական ապարանքների ճարտարապետական առանձնահատկությունները, շինությունների ներքին և արտաքին գեղարվեստական հարդարանքը (ներառյալ՝ հախճաասալիկների կիրառումը, գմբեթների, առաստաղների նկարազարդումը, հայելիների կիրառումը, որմնանկարչությունը), որում նկատվում են միաժամանակ և հայկական, և իրանական, և եվրոպական արվեստի ու ճարտարապետության ազդեցության տարրերը:

**Իրինա Բադալյան** (Հայաստան, Երևան)

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ  
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (1991–2022 ԹԹ.)

**Ирина Бадалян** (Армения, Ереван)

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В АРМЯНСКОЙ И  
АЗЕРБАЙДЖАНСКОЙ ОБЩИНАХ СЕВЕРНОГО КAVKAZA  
(1991–2022 ГГ.)

Irina Badalyan (Armenia, Yerevan)

DEMOGRAPHIC PROCESSES IN THE ARMENIAN AND  
AZERBAIJANI COMMUNITIES OF THE NORTH CAUCASUS  
(1991–2022)

Հայկական համայնքների պատմության ուսումնասիրությունը վերջին տասնամյակներում մշտապես եղել է հետազոտողների ուսումնասիրության կենտրոնում և կազմել է Հայոց պատմության անքակտելի մասը: Հետխորհրդային տարիներին նշանակալի ուշադրության արժանացավ նախկին ԽՍՀՄ միութենական հանրապետությունների հայկական համայնքների պատմության նորովի ուսումնասիրությունը:

Եվ այս տեսանկյունից հատկապես կարևորվեց Հյուսիսային Կովկասի տարբեր երկրամասերում ձևավորված հայկական համայնքների ժողովրդագրությունը: Դրա հրատապությունը ակնհայտ էր հետխորհրդային, հատկապես Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններից սկսված արտագաղթի համապատկերում, ինչը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով, քաղաքական վայրիվերումներով և պատերազմական գործողություններով: Հյուսիսային Կովկասում նախորդ դարերում ձևավորված հայկական համայնքները սկսեցին համալրվել նոր թափով: 1990-ական թթ. ադրբեջանցիները ևս սկսեցին տեղափոխվել Հյուսիսային Կովկաս, որտեղ նրանք իսլամական միջավայրում արագ հարմարվել և գործունեություն են ծավալել:

Թեև ԽՍՀՄ փլուզումից և Արցախյան ազգային-ազատագրական շարժման ծավալման ժամանակ ու հետո հայերի և ադրբեջանցիների հոծ խմբերն սփռվեցին աշխարհի տարբեր երկրներում, բայց մեր հետազոտական հետաքրքրությունների շրջանակում կարևորվել է միայն Հյուսիսային Կովկասը: Տեղի հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը գիտական հետազոտության կայուն հիմքերի վրա դրվեց միայն 20-րդ դարի երկրորդ կեսին: Հատուկ ուշադրություն դարձվեց հայկական համայնքների ժողովրդագրության, հոգևոր-մշակութային կյանքի պատմության հարցերի ուսումնասիրմանը: Ի տարբերություն հայկական համայնքների վերաբերյալ տեղեկատվության՝ մինչ օրս հայկական գիտական շրջանակներում ադրբեջանական համայնքների վերաբերյալ գիտական լուրջ հետազոտության չենք հանդիպել: Ուստի համակողմանի քննության են ենթարկվելու ժողովրդագրական գործընթացները Հյուսիսային Կովկասի հայկական և ադրբեջանական համայնքներում:

2020 թ. պատերազմից հետո արդիական դարձավ հայ և ադրբեջանցի ժողովուրդների խաղաղ գոյակցության հնարավորության քննարկումը: Այս առումով կարևոր են Հարավային

Կովկասից դուրս նման օրինակների իմաստավորումը և տեղայնացման տեսական հնարավորությունների դիտարկումը: Հատկանշական է, որ, որքան մեզ է հայտնի, երբևէ փորձ չի արվել ուսումնասիրելու հայ և ադրբեջանական համայնքները նույն դիտակետից, թեև եղել են հետազոտություններ հայկական կամ ադրբեջանական համայնքներին վերաբերող բազմաթիվ առանձին ուսումնասիրություններ: Առավել սակավաթիվ են դառնում տեղեկությունները, երբ գործ ենք ունենում ժողովրդագրական գործընթացների հետ:

Սույն զեկուցման մեջ ներկայացվելու են Հյուսիսային Կովկասի հայկական և ադրբեջանական համայնքների ժողովրդագրական պատկերի, առկա հիմնախնդիրների վերլուծական, ինչպես նաև ժողովրդագրական արդի գործընթացների և զարգացման միտումների ընթացիկ ուսումնասիրությունների արդյունքները:

Խնդիր ենք դրել ներկայացնելու՝

համայնքների ձևավորման պատճառները,

հայկական և ադրբեջանական համայնքների բաշխվածությունը Հյուսիսային Կովկասում,

համայնքների աճի կամ նվազման դինամիկան,

Հյուսիսային Կովկասից ՌԴ այլ համայնքեր կամ այլ երկրներ տեղափոխության պատճառներն ու ուղղությունները,

Հայաստանից և Ադրբեջանից արտագաղթելու վրա ազդող գործոնները,

ազգամիջյան կապեր, խառնամուսնություններ, գործնական հարաբերություններ, կրթական և մշակութային փոխառնչությունները,

ՌԴ օրենքների ազդեցությունը ժողովրդագրական իրողությունների վրա:

**Խաչատուր Ստեփանյան** (Հայաստան, Երևան)  
ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ «ԿԻԼԻԿԻԱՆ, ԱՆՏԻՈՔԸ,  
ԱՄԱՆՈՍԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ  
ՀԱՆԳՈՒՅՑ» ՄԵԾԱՐԺԵՔ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

**Хачатур Степанян** (Армения, Ереван)  
ЦЕННЫЙ ТРУД РУБЕНА ТЕР-МИНАСЯНА  
«КИЛИКИЯ, АНТИОХИЯ, АМАНΟΣ КАК УЗЕЛ  
МЕЖДУНАРОДНЫХ ДОРОГ»

**Khachatur Stepanyan** (Armenia, Yerevan)  
RUBEN TER-MINASYAN'S VALUABLE WORK  
“CILICIA, ANTIOCH, AMANOS AS A JUNCTION OF  
INTERNATIONAL ROADS”

Զեկույցում հանգամանալից վերլուծում և ներկայացնում ենք հայ ականավոր պետական, կուսակցական գործիչ, երկրառազմավարական մտքի եզակի ներկայացուցիչ Ռուբեն Տեր-Մինասյանի վերջերս հրատարակված անտիպ «Կիլիկիան, Անտիոքը, Ամանոսը որպես միջազգային ճանապարհների հանգույց» մեծարժեք հետազոտությունը, որը հենց հեղինակի խոսքով «Հայաստանը միջցամաքային ուղիների վրա» հատորի տրամաբանական շարունակությունն է (երկրորդ հատորը):

Ուսումնասիրության մեջ Ռուբեն Տեր-Մինասյանի հիմնական նպատակը Կիլիկիայի և նրա հարակից շրջանների ռազմավարական դիրքի արժևորումն է, որը նա իրականացրել է փայլուն տրամաբանությամբ, փաստարկման յուրահատուկ մոտեցմամբ, պատմահամեմատական դիպուկ վերլուծություններով: Հեղինակը նախ ներկայացնում է երկրամասի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի կեսերը: Ապա կատարում է խիստ արդիական երկրառազմավարական վերլուծություններ:

Աշխատանքը հիմնականում կառուցվում է այն հետաքրքիր գաղափարի շուրջ, որ հատկապես Կիլիկիան և նրա հարակից

շրջաններն (Անտիոք, Ամանոս) են հանդիսացել տարածաշրջանի պատմական գլխավոր իրադարձությունների առանցքը: Հեղինակը հմտորեն պարզաբանում է, որ, ունենալով աշխարհագրական նպաստավոր դիրք և շրջապատված լինելով բնական ամրություններով (անմատչելի լեռներ և դժվարանցանելի լեռնանցքներ), այս երկրամասը եղել տարածաշրջանի քաղաքակրթական զարգացման շարժիչը, այստեղ են թելադրվել տարածաշրջանի ռազմաքաղաքական վերելքներն ու վայրէջքները, այստեղ է տեղի ունեցել տարածաշրջանի համար բախտորոշ ճակատամարտերի մեծ մասը:

Այս հատորի սկզբում Ռ. Տեր-Մինասյանն իր առջև խնդիր է դնում պարզել Կիլիկիայի, Անտիոքի և Ամանոսի նշանակությունն ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս: Հեղինակը կարողացել է փայլուն և դիպուկ համեմատություններով, մեկնաբանություններով լուծել իր առաջադրած խնդիրը:

Արժևորելով Կիլիկիայի աշխարհաքաղաքական դերը՝ Ռ. Տեր-Մինասյանն ափսոսանք է հայտնում, որ Ֆրանսիան Երկրորդ աշխարհամարտից առաջ Կիլիկիայի հարավային հատվածը՝ Ալեքսանդրեթի սանջակը զիջեց Թուրքիային՝ պատերազմի ժամանակ վերջինիս չեզոքությունն ապահովելու հույսով: Բուն Կիլիկիան ավելի շուտ՝ 1921 թ. էր զիջել:

Հայտնի է, թե ինչպիսի չեզոքություն պահեց Թուրքիան Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Թուրքիան ոչ միայն չեզոքություն չպահեց, այլև պատերազմից հետո լուրջ ռազմավարական առավելություն ստացավ Մերձավոր Արևելքում:

Ըստ էության, եթե առաջին հատորում («Հայաստանը միջցամաքային ուղիների վրա») Ռ. Տեր-Մինասյանը գնահատում է Էրզրումի ունեցած դերը Թուրքիայի՝ դեպի Անդրկովկաս և Իրան նկրտումների առումով, ապա երկրորդ հատորում («Կիլիկիան, Անտիոքը, Ամանոսը, որպես միջազգային ճանապարհների հանգույց») խոսում է Թուրքիայի՝ դեպի Սիրիա և, ընդհանրապես, արաբական աշխարհ ունեցած հնարավոր ծրագրերի մասին,

որոնց հաջողությունը մեծապես պայմանավորված է Կիլիկիայի ունեցած դիրքով:

Ահա այս աշխարհաքաղաքական կարևոր հարցերին է անդրադառնում Ռ. Տեր-Մինասյանն իր սույն հատորում, որը շուրջ 70 տարի անց անգամ չի կորցրել իր արդիականությունը:

**Կարեն Մկրտչյան** (Հայաստան, Երևան)  
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱԿՆԱՐԿՆԵՐՆ  
ԻՐԱՆԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

**Карен Мкртчян** (Армения, Ереван)  
ОБЗОРЫ НА АРМЯНСТВО В ИРАНСКОЙ РЕЧИ

**Karen Mkrtchyan** (Armenia, Yerevan)  
ALLUSIONS TO ARMENIANS IN IRANIAN DISCOURSE

Հայության մասին իրանական խոսույթում առկա ակնարկները վերաբերում են հայ համայնքի կյանքին, իրանական հասարակական կյանքում հայերի ունեցած կարևոր ու առաջադիմական դերին, ինչպես նաև հայ ժողովրդի պատմության առանձին դրվագներին:

Իսաղաղ գոյակցության ու համակեցության փորձը հայ և իրանցի ժողովուրդների համար ներկայումս ստեղծել է նպաստավոր նախադրյալներ ու պայմաններ տարածաշրջանում տարբեր քաղաքակրթությունների բանուկ խաչմերուկ դառնալու համար: Հիրավի, այդ միջքաղաքակրթական կապերը նորովի արժևորվել են Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, ինչպես նաև նոր լիցքեր են ստացել հայ ժողովրդի Արցախի հատվածին պատուհասած 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, երբ տարածաշրջանում նվազել է հայկական գործոնը, որը մինչ այդ անվտանգային բաղադրիչներ էր պարունակում:

Այդ պայմաններում, երբ ժամանակ առ ժամանակ ռազմաքաղաքական հոռետորաբանությունը տարածաշրջանում բարձր մակարդակի է հասնում, իրանական հանրային ու պաշ-

տոնական խոսույթում խաղաղասիրական կոչերի և առողջ բանականության սահմաններում կարգի հրավիրելու փորձերի հետ միաժամանակ որոշակի տեղ է զբաղեցնում հայ համայնքի գործունեության մասին ակնարկների հրապարակումը կամ պարզապես տեսակետների արտահայտումը:

Անկասկած, հայ-իրանական բարիդրացիական հարաբերությունների հիմքում հայ համայնքի վարքն է, որը գնահատվում է իրանցի բարձրաստիճան պաշտոնյաների ու հայ համայնքի առաջնորդների հետ հանդիպումների ընթացքում սոցիալական, կրթական և բազմաթիվ այլ խնդիրներ քննարկելիս:

Հարկ է նշել, որ Իրանում հայկական մշակույթը ներկայացնելու և այն ճանաչելի դարձնելու գործում որոշակի դեր են ստանձնել հայ համայնքային կազմակերպությունները: Այդ մասին է վկայում Թեհրանի «Հայ կին» միությանը կից «Անահիտ» միության նախաձեռնությամբ պարսկերեն հրատարակվող «Պայման» («Փեյման») պարբերականի և Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոնի (ՀՌԻՍԿ) կատարած աշխատանքները:

Վերոնշյալի համատեքստում արժե նշել իրանահայ անվանի մշակութային և կրթական գործիչների կողմից կատարած թարգմանությունները, որոնց միջոցով պատմագիտական նշանակություն ունեցող երկերն ու աշխատությունները դրվում են հայ և իրանցի ընթերցողի սեղանին: Թերևս հենց այդ կերպ նոր հարթակներ են ստեղծվում արդեն գիտական խոսույթում անդրադառնալու հայությանն ու նրա խաղացած պատմական դերին տարածաշրջանում: Այդ մասին է վկայում ՀՌԻՍԿ հաստատության նախաձեռնությամբ կազմակերպված հերթական դասախոսություններից մեկում Թեհրանի Ալլամե Թաբաթաբայիի անվան համալսարանի միջազգային իրավագիտության բաժնի դասախոս, դոկտոր Հերմիդաս Բավանդի՝ «Իրանահայության պատմական դերը Իրանում» թեմայով զեկույցը: Ըստ նրա՝ Սեֆյան Իրանում հայերը զգալի դեր են ունեցել Միջին Արևելքի և Իրան-Հնդկաստան առևտրական խաչմերուկի զարգացման գործում:



**Հակոբ Սիմոնյան** (Հայաստան, Երևան)  
ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ. ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԲՐՈՆԶԻ ԴԱՐՈՒՄ

**Акоб Симонян** (Армения, Ереван)  
АРМЕНИЯ-ИРАН: ВЗАИМОДЕЙСТВИЯ В ЭПОХУ БРОНЗЫ

**Hakob Simonyan** (Armenia, Yerevan)  
ARMENIA-IRAN: INTERCONNECTIONS IN THE BRONZE AGE

Ավելի քան 150 հա տարածք զբաղեցնող, հարյուրավոր դամբանաբլուրներից բաղկացած Վերին Նավերի հնավայրը ՀՀ Արագածոտնի մարզում է՝ Երևանից 25/30 կմ դեպի արևմուտք, ծ.մ. 1100 մ բարձրությամբ սարավանդի վրա: 1976 թ. մինչ այսօր իրականացվող պեղումների շնորհիվ բացահայտվել են մեկ և կես հազարամյակ հարատևած դամբարանադաշտի տարբեր շրջափուլերի հուշարձաններ, որոնցից առանձնանում են Ք.ձ.ա. 2-րդ հազարամյակի կեսի վերնախավի կոթողային դամբարանները: Առյուծների և հովազների մորթիներով պատված քարակերտ, ընդարձակ դամբանասրահներում հայտնաբերվել են իշխանության՝ կնիքներ և հեղինակության՝ մարտակառքեր (բրոնզե մանրամասներ), ներմուծված և տեղական պերճանքի առարկաներ, զենքեր, զարդեր, գործիքներ:

Առանձնահատուկ են վաղ երկաթի լայն կիրառումից շուրջ 500 տարի առաջ պատրաստված երկաթե զենքերը և զարդերը, ոսկուց, գունաքարերից ու հնագույն ապակուց պատրաստված ուլունքները, Միջագետքից ներմուծված ջնարակապատ առարկաները, ծովային խխունջները՝ ապրանքադրամները:

Ցնցող գյուտերից է բիտումից կերտված առաջնորդ-արքաների դիմաքանդակներով, կենաց ծառերի և արխարների պատկերներով թագի կամ գլխազարդի ոսկեպատ մեղալյոնները, ինչպես նաև ուսագոտու ճարմանդները: Սրանք հատուկ են միջին Էլամական մշակույթին և մինչ այժմ հայտնի չէին Բաբելոնից հյուսիս գտնվող տարածքներում: Հեղինակության

և իշխանության խորհրդանիշները, երկաթի զենքերը, պաշտամունքային կավանդների հավաքածուները, ինչպես նաև հեռավոր երկրներից ներկրված իրերը վկայում են, որ Ք.ճ.ա. 1650–1500 թթ. Արագածոտնում առկա են պետականության և արքայական թաղման ծեսին բնորոշ հատկանիշներ: Իրանի հին արվեստին բնորոշ արքայական ընծաները հավանաբար Արարատյան մեզ անհայտ թագավորին է ուղարկել էլամի տիրակալը:

Այս գտածոները մատնանշում են հին Հայաստանի կարևորությունը վաղ քաղաքակրթությունների քաղաքական կյանքում: Էլամական մշակույթին հատուկ Վերին Նավերի գտածոները Հայաստանի և Իրանի միջև եղած կապերի հնագույն վկայություններն են:

**Համլետ Պետրոսյան** (Հայաստան, Երևան)

«ԱՂՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ». ԽՈՐՀՐԴԱՀԱՅ  
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԴԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԲՈՒԱՅՈՒՐԱՑՄԱՆ  
(20-ՐԴ ԴԱՐԻ 60–80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

**Гамлет Петросян** (Армения, Ереван)

«СИНДРОМ КАВКАЗСКОЙ АЛБАНИИ». СОВЕТСКОЕ  
АРМеноВЕДЕНИЕ ПРОТИВ АЗЕРБАЙДЖАНСКОЙ  
ЭКСПРОПРИАЦИИ АРМЯНСКОГО КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ  
(60–80-Е ГОДЫ 20 ВЕКА)

**Hamlet Petrosyan** (Armenia, Yerevan)

“SYNDROME OF CAUCASIAN ALBANIAN”: SOVIET-ARMENIAN  
ARMENOLOGY AGAINST AZERBAIJANI EXPROPRIATION OF  
ARMENIAN CULTURAL HERITAGE (60s–80s OF THE  
20TH CENTURY)

Անցած դարի 60-ական թվականները խորհրդային Միությունում նշանավորվում են նաև «ազգային զարթոնքով», որի

հիմնական դրսևորումներից մեկն էլ «տիտղոսակիր» ժողովուրդների պատմական ինքնության կերտումն ու վերակերտումն էր՝ իրենց վարչական տարածքում:

Եթե Թուրքիայի դեպքում կորուսյալ հայկական տարածքների պատմության ու մշակույթի քննությունը վաղուց ընդունելի էր, «եղբայրական» Ադրբեջանի դեպքում այն նոր թեմա էր: Նոր ինքնություն ստեղծելու ճանապարհին Ադրբեջանի ամենամեծ խոչընդոտը մեծաքանակ հայ բնակչությունն էր և հայերի մշակութային ահռելի ժառանգությունը: Վերջինս հնագիտական, ճարտարապետական և ազգագրական հազարավոր հուշարձանների տեսքով սփռված էր խորհրդային Ադրբեջանի ամբողջ տարածքով մեկ՝ առավել հոծ կուտակումներ ունենալով Արցախում, Ուտիքում և Նախիջևանում: Հայ պատմական անցյալի ու հայ մշակութային ժառանգության բռնալուծումը ադրբեջանական պաշտոնական և ակադեմիական շրջանակների կողմից ընթանում էր արտաքնապես բավականին խճողված, բայց ներքուստ ճկուն մեխանիզմի միջոցով: Ինտելեկտուալ մակարդակով այն ստանում էր կեղծ գիտական բնույթ, ընդ որում այդ նպատակի համար օգտագործվում էին երկու հիմնական լծակներ.

ա) ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների իրավահավասարության քարոզի ներքո հայ (երբեմն ուղղակի «ղարաբալյան») և ադրբեջանական մշակույթների «հարազատության», «ընդհանուր ակունքների» և «նմանությունների» վերհանում,

բ) միջանկյալ օղակի ստեղծում, որի նպատակն էր հայ մշակութային ժառանգության վերագրումը աղվաններին, իսկ աղվաններից էլ ադրբեջանցիներին:

Հաջորդ երկու մեխանիզմները վարչական-տեխնիկական էին.

գ) մշակութային ժառանգության հետազոտության հանրապետական մենաշնորհ,

դ) հայկական ժառանգության նենգափոխում, ձևափոխում և ֆիզիկական ոչնչացում:

Ներկա զեկուցման նպատակն է քննել, թե ինչպես էր դիմակայում հայագիտությունն այս բազմալծակ հակահայ ար-

շավին: Այս տեսակետից հատկապես առաձնանում է մեր կողմից պայմանականորեն «աղվանական համախտանիշ» անվանված խնդիրը: Հակադրվելով ադրբեջանական քաղաքական-«գիտական»-գործնական կոնստրուկտին՝ հայագետների մի ամբողջ սերունդ «ստիպված» էր ժխտել, հեռացնել հայ պատմական ժառանգությունից աղվաններին ու աղվանականը: Հայկական ջանքերը՝ ամեն կերպ հեռացնել մեր պատմա-մշակութային անցյալից ցանկացած «աղվանական» դրսևորում նույնպես հայտնի չափով նպաստել է հայկական մշակութային կորուստներին: Ադրբեջանցիները անհեթեթորեն հայկական ամբողջ ժառանգությունը՝ հայտնի մարդկանց, իշխանական տները, ժողովրդին, մշակութային անշարժ ժառանգությունը հայտարարում էին աղվանական, իսկ հայագետները եռանդագին ջանքերով հերքում էին այդ անհեթեթությունը: Արդյունքում համարյա կատեգորիկ պնդումներ հայերի և աղվանների էթնո-մշակութային բաժանվածության շեշտադրում, աղվանից գրական լեզվի և գրականության գոյության ժխտում, Աղվանից եկեղեցու դավանական ու ծիսական առանձնահատկությունների անտեսում, Աղվանք եզրի օտարում և այլն: Նման մոտեցումը նվազեցրեց ակադեմիական հետաքրքրությունը դեպի աղվանագիտություն, պայմանավորեց աղվանագիտական կադրերի համարյա բացակայությունը հայագիտության մեջ: Բարձր գնահատելով հայագետների երկու սերնդի ջանքերն ընդդեմ ադրբեջանական բռնալուծարան՝ միաժամանակ գտնում ենք, որ 20-րդ դարի 60-80-ական թվականների խորհրդահայ հայագիտության կամա-ակամա սայթաքումների, քաղաքականացված կամ ազգայնական մոտեցումների վերհանումը, քննությունը և իմաստավորումը անհրաժեշտ են ոչ միայն այդ ժամանակների գիտական մշակույթը հասկանալու, այլ նաև հայագիտության արդի խնդիրներն էլ ավելի հստակ սահմանելու ու համապատասխան մարտավարություն մշակելու համար:

**Համո Սուքիասյան** (Հայաստան, Երևան)  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ  
ՀԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1918–1920 ԹԹ.)

**Амо Сукиасян** (Армения, Ереван)  
ЗНАЧЕНИЕ ТЕРРИТОРИАЛЬНО-ПОГРАНИЧНЫХ ВОПРОСОВ  
В ОТНОШЕНИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С ГРУЗИЕЙ И  
АЗЕРБАЙДЖАНОМ (1918–1920 ГГ.)

**Hamó Sukiasyan** (Armenia, Yerevan)  
THE IMPORTANCE OF TERRITORIAL-BORDER ISSUES IN THE  
RELATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA WITH GEORGIA  
AND AZERBAIJAN (1918–1920)

1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմի լուծարումից և Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի անկախացումից հետո վրացիները, ադրբեջանցիները և հայերը ձեռնամուխ եղան սեփական անկախ պետությունների կայացմանը: Նորանկախ պետությունների հարաբերություններում փոխըմբռնում և վստահություն չկար նախկինից կուտակված հակասությունների պատճառով: Դրանցից ամենասուրը տարածքային-սահմանային վեճերն էին: Արտաքին կողմնորոշման, չկարգավորված ազգամիջյան հարաբերությունների և տնտեսական հարցերի կողքին այն Այսրկովկասի ժողովուրդներին տարանջատող ու հակասություններ առաջ բերող հիմնական խնդիրն էր և հարևանների միջև բարիդրացիական փոխհարաբերություններ հաստատելու փորձաքարը:

Այսրկովկասյան երեք անկախ հանրապետությունների ստեղծումից հետո մինչ այդ հասարակական և կուսակցական մակարդակներով Այսրկովկասի վարչատարածքային վերաբաժանման շուրջ ընթացող քննարկումները վերաճեցին միջպետական տարածքային վեճերի և հակամարտությունների: Փոխ-

համաձայնության հանգեցրին խանգարում էր այն, որ վեճերի լուծման սկզբունքների վերաբերյալ կողմերը տրամազօրեն տարբեր պատկերացումներ ունեին, ինչը երևան եկավ արդեն 1918 թ. հունիսի սկզբներին սահմանների ճշգրտման նպատակով Թիֆլիսում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների միջև անցկացված բանակցությունների ընթացքում: Ուստի օրինաչափ էր, որ այդ բանակցությունները շոշափելի արդյունք չունեցան և ընդհատվեցին:

Հայաստանի և Վրաստանի միջև սահմանազատմանը խոչընդոտող գլխավոր հարցը Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառի և Բորչալուի գավառի հարավային մասի՝ Լոռու պատկանելության խնդիրն էր: Առկա հակասությունները 1918 թ. դեկտեմբերին հանգեցրին երկշաբաթյա պատերազմի, որը բրիտանացիների միջնորդությամբ դադարեցվեց: Առավել սուր էին Ադրբեջանի հետ եղած սահմանային վեճերը. երկու անկախ հանրապետությունների գոյության ամբողջ ընթացքում շփման գծի երկայնքով պարբերաբար զինված բախումներ էին ընթանում: Պատճառը նախկին Ելիզավետպոլի նահանգի Ղազախի, Զանգեզուրի գավառների, Զևանշիրի, Շուշիի և Կարյազինոյի գավառների լեռնային տարածքների (Լեռնային Ղարաբաղ) պատկանելության շուրջ վեճն էր: Ադրբեջանը հավակնություններ էր հանդես բերում նաև Երևանի նահանգի մեջ մտած Շարուր-Նախիջևանի և այլ տարածքների նկատմամբ:

Այսրկովկասյան հանրապետությունների անկախության շրջանում նրանց միջև եղած սահմանային վեճերը խաղաղ բանակցությունների ճանապարհով կարգավորելու փորձերը հաջողությամբ չպսակվեցին, քանի որ կողմերը խուսափում էին վերջնական որոշումներ կայացնել: Մեր տպավորությամբ՝ սահմանային վեճերի լուծմանը չգնալու հիմնական պատճառն այն էր, որ պետություններից յուրաքանչյուրը հույս ուներ Աստանտի երկրների օժանդակությամբ Փարիզի հաշտության վեհաժողովում իր համար առավել ընդունելի լուծման հասնել, ինչը վերջնարդյունքում որևէ մեկին չհաջողվեց:

**Հայկուհի Մուրադյան** (Հայաստան, Երևան)  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾՈՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

**Айкуи Мурадян** (Армения, Ереван)  
ФАКТОР КУЛЬТУРЫ В КОНТЕКСТЕ ВНЕШНЕЙ  
ПОЛИТИКИ АЗЕРБАЙДЖАНА

**Haykuhi Muradyan** (Armenia, Yerevan)  
THE FACTOR OF CULTURE IN THE CONTEXT  
OF AZERBAIJAN'S FOREIGN POLICY

Զեկույցում քննարկվում է Ադրբեջանի արտաքին քաղաքականության համատեքստում մշակույթի գործոնի դերակատարումը և նշանակությունը: Նախնական դիտարկումների համաձայն ակնհայտ հակասություն կա Ադրբեջանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ:

Ադրբեջանի կողմից հայկական ժառանգությունը բռնայրարացնելու քաղաքականությունը, որը հատկապես սրություն էր ստանում զինված բախումների և պատերազմների ժամանակ, հայ մասնագետներին դրդել է մշտապես կենտրոնանալ Ադրբեջանի՝ հակահայ քաղաքականության հետազոտության, դրա մեխանիզմների վերլուծության ուղղությամբ, մինչդեռ կարևոր է հետազոտել նաև Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական մեխանիզմները և ուղղությունները, որտեղ մշակույթի գործոնը կարևոր ու առաջնային դերակատարում ունի և միտված է Արևմուտքի մշակութային գործընթացների ինտեգրմանը:

Զեկույցի հիմնական նպատակն է ներկայացնել Ադրբեջանի արտաքին քաղաքականության կառուցման հիմնական թեզերը, ուղղություններն և գործիքները, որոնք ձևավորվեցին Խորհրդային Միության փլուզումից ի վեր, և հատկապես ընդգծել մշակույթի դերը արտաքին քաղաքականության մեջ որպես շարժիչ «փափուկ ուժ»:

Դիտարկվել են Ադրբեջանի արտաքին քաղաքականության կառուցումը հանրային դիվանագիտության, արտաքին տնտեսական ներդրումների, միջազգային ինտենսիվ համագործակցության տեսանկյունից:

- Հետազոտությունում քննարկվում են հետևյալ հիմնահարցերը՝
  - անկախության տարիների Ադրբեջանի արտաքին կերպարի ստեղծումը,
  - իրավա-օրենսդրական դաշտը որպես քաղաքականության հիմնական գործիք,
  - տնտեսական արտաքին ներդրումները, կապերը և մշակութային փոխառնչությունները,
  - միջազգային կառույցների հետ ակտիվ համագործակցությունը և Ադրբեջանի «բազմամշակութային» և «հանդուրժողական» կերպարի ստեղծումը,
  - ներքին քաղաքականության և սեփական ինքնության կառուցման ճանապարհին այլ (հիմնականում՝ հայկական) մշակութային տարրերի բռնայնությանը որպես հիմնարար քաղաքականություն:

**Հարություն Խուդանյան** (Հայաստան, Երևան)

ՆԱԽԿԻՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԶԱՆԱՇԻԱՅԻ ԱՆՎԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

**Арутюн Худанян** (Армения, Ереван)

СОХРАНЕНИЕ АРМЯНСКОГО ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО  
НАСЛЕДИЯ БЫВШЕГО КАВКАЗСКОГО МУЗЕЯ В  
ГОСУДАРСТВЕННОМ МУЗЕЕ ГРУЗИИ ИМЕНИ С. ДЖАНАШИЯ

**Harutyun Khudanyan** (Armenia, Yerevan)

PRESERVATION OF THE ARMENIAN HISTORICAL AND  
CULTURAL HERITAGE OF THE FORMER CAUCASUS MUSEUM  
IN THE STATE MUSEUM OF GEORGIA NAMED AFTER S. JANASHIA



Դեռևս 19-րդ դ. Գուստավ Ռադեի ջանքերով ստեղծվեց Թիֆլիսի Կովկասյան թանգարանի հավաքածուն: Այն ներկայացնում էր ցարական ժամանակաշրջանի հայ, ռուս, վրացի, գերմանացի և այլ ուսումնասիրողների գլխավորապես դաշտային, հնագիտական, հավաքչական հետազոտությունների ու որոնումների արդյունքում ձեռք բերված նյութերը, ներառում էր նաև հարուստ հայկական պատմամշակութային ժառանգություն: Վերջինս բաղկացած էր Արևմտյան և Արևելյան Հայաստանի, ինչպես նաև հարևան այլ տարածքներից հայտնաբերված կամ ձեռք բերված մշակույթի ու արվեստի բազմաթիվ նմուշներից, որոնք ներկայացնում են քարից, մետաղից, կավից և այլ հումքից պատրաստված ինչպես հնագիտական, այնպես էլ ազգագրական արտեֆակտներ: Թանգարանի ընդհանուր հավաքածուի գերակշիռ մասը՝ այդ թվում և հայկականը, դեռևս 20-րդ դարասկզբին հրատարակվել է գերմաներեն մի քանի հատորյակով: Ուստի թեև հիմնականում հրապարակված են այդ նյութերը, սակայն միևնույն ժամանակ կարելի է ասել, որ առանձին դրվագները չհաշված, դրանք մոռացության են տրված անգամ հայ մասնագիտական շրջանակների կողմից: Պետք է նշել, որ հայ իրականությունում դրանք Հայոց անցյալի այն առաջին վկաներն էին, որոնք հայկական թանգարանի բացակայության պայմաններում տեղ էին գտել տարածաշրջանային պատմությունը, հնագիտությունն ու ազգագրությունը ներկայացնող մշակութային օջախում:

20-րդ դարասկզբին առաջացած առաջին հանրապետությունների շրջանում ՀՀ կառավարության խնդրանքով Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուից հատուկենտ նմուշներ վրացական կողմը տրամադրել է հայկական կողմին: Մի մասը, որոշ տեղեկությունների համաձայն, մասնավորապես Աղստևի ավազանում և Արցախում պեղածո, ինչպես և ազգագրական նյութերը փոխանցվել են Ադրբեջանին: Այդուհանդերձ, հայկական հավաքածուի գերակշիռ մասը ցայսօր

պահվում է ինչ-որ առումով Կովկասյան թանգարանի ժառանգորդ հանդիսացող Թբիլիսիի Ս. Զանաշիայի անվան Վրաստանի պետական թանգարանում: Մասնավորապես վերջին տարիներին Վրաստանի ազգագրության բացօթյա թանգարանից Զանաշիայի թանգարանի «Քարե Ֆոնդ» են տեղափոխվել Հայաստանի տարբեր վայրերից հայտնաբերված շուրջ երեք տասնյակ խաչքարեր, տապանաքարեր ու քառակող սյունակոթողներ, որոնց մեջ հատկապես առանձնանում են Ջուղայից ժամանակին բերված բարձրարվեստ արձանագիր խաչքարերն ու խոյատապանները: Այդ ֆոնդում են պահպանվում նաև 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Հայաստանի տարածքներից հայտնաբերված ուրարտական շուրջ 22 արձանագիր կոթողներ, ինչպես նաև մեկ անգլուխ մարդահասակ քարե արձան: Դրանք հետազայում հրատարակվել են վրացի ուրարտագետներ Գ. Ծերեթելու, ապա և Գ. Մելիքիշվիլու ուրարտական արձանագրությունների դիվաններում:

**Հրանուշ Խարատյան** (Հայաստան, Երևան)

ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ «ԱԴԻԲԵԶԱՆՑԻՆԵՐԻ ԴԵՊՈՐՏԱՑԻԱՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 1947–1950 ԹԹ. ԱԴԻԲԵԶԱՆԱԿԱՆ ՆՈՐ  
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

**Грануш Харатян** (Армения, Ереван)

ТАК НАЗЫВАЕМАЯ «ДЕПОРТАЦИЯ АЗЕРБАЙДЖАНЦЕВ»  
ИЗ АРМЕНИИ В 1947–1950 ГОДАХ В РАМКАХ  
ФАЛЬСИФИКАЦИИ ПОСТРОЕНИЯ НОВОЙ  
АЗЕРБАЙДЖАНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ

**Hranush Kharatyan** (Armenia, Yerevan)

THE SO-CALLED “DEPORTATION OF AZERBAIJANIS” FROM  
ARMENIA IN 1947–50 AS PART OF THE FALSIFICATION OF THE  
CONSTRUCTION OF THE NEW AZERBAIJANI IDENTITY

1988 թ. սկսած ադրբեջանական էթնիկական ինքնության կառուցման ճարտարապետությունը ինտենսիվ աշխատել է և շարունակում է աշխատել պատմության կեղծարարության, հակահայկական ատելության ու ռասիզմի հիմքի վրա: Սույն գեկուցումը ներկայացնում է դրա ձևերից մեկը: Ադրբեջանում այն կոչվում է «ադրբեջանցիների դեպորտացիան Հայաստանից», և լայնորեն տարածվում է կեղծ գիտական ու հրապարակախոսական բոլոր հնարավոր միջոցներով՝ ներկայացվելով որպես ցեղասպանություն:

ԽՍՀՄ քաղաքական դեպորտացիաների մասին հետազոտություններին քիչ թե շատ ծանոթ ցանկացած հետազոտող գիտի, որ միլիոնավոր մարդկանց, ընտանիքների և ժողովուրդների ճակատագրերը փոխած դեպորտացիաները իրականացվել են խիստ գաղտնի պայմաններում, դեպորտացվողներին հավաքել են գիշերը՝ ավտոմատների փողի տակ, լցրել գնացքները, և էշելոնները նրանց տարել են Սիբիր կամ Միջին Ասիա: Միայն աքսորավայրում են մարդիկ իմացել, թե իրենց ուր են տարել, և հաճախ այդպես էլ չեն իմացել, թե ինչո՞ւ: Աքսորավայրում նրանց հարկադրել են ստորագրել, որ իրենց բնակության վայրից առանց իրավունքի չեն կարող դուրս գալ, և փախուստի փորձի դեպքում 25 տարով կուղարկվեն տաժանակիր աշխատանքի: Այս կարգի էթնիկական դեպորտացիաների են ենթարկվել ԽՍՀՄ բազմաթիվ ժողովուրդներ, այդ թվում՝ Կովկասից, մի մասը՝ ամբողջական, մյուսները՝ մասնակի: Այդ կարգի դեպորտացիայի են ենթարկվել նաև հայերը՝ աքսորվելով Ալթայի երկրամաս և Տոմսկի մարզ:

Այս կարգի դեպորտացիաների շարքում կա ադրբեջանական ժողովրդի մի շատ տարօրինակ տեղափոխության դեպք: Այն ինչ-որ իմաստով կապ ունի ԼՂԻՄ-ի հավերժաբար չլուծվող հարցի հետ: 1945 թ. Հայաստանի իշխանությունները դիմում են Ստալինին՝ խնդրելով ԼՂԻՄ-ը միավորել Հայաստանի հետ: Խնդրանքը հիմնավորում են պատմական, տնտեսական և մշա-

կութային փաստարկներով: Այս խնդրանքին Ադրբեջանի Կենտրոնի առաջին քարտուղար Մ. Բաղիրովը պատասխանում է, որ իրենք պատրաստ են հարցը քննարկել պայմանով, որ ԼՂԻՄ-ից Ադրբեջանին մնա Շուշիի շրջանը, Ադրբեջանին միացվեն Հայաստանի ադրբեջանցիներով բնակցված տարածքները և անցյալում Ադրբեջանին պատկանած (?) Դադստանի Դերբենդի և Կասումքենդի շրջանները: Այս առաջարկը, բնականաբար, սադրիչ էր: Երկու տարի անց Ադրբեջանի և Հայաստանի համատեղ առաջարկով ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում է «1948–1950 թթ. ընթացքում Հայաստանից կամավոր հիմունքներով Ադրբեջանական ԽՍՀ Կուր-Արաքսյան ցածրավայր տեղափոխել 100.000 ադրբեջանցիների» իրենց մասնավոր և կոլխոզների սեփականությամբ, տեխնիկայով, անասուններով, Ադրբեջանում ԽՍՀՄ բյուջեից հատկացված միջոցներով նրանց համար բնակավայրեր ու բնակարաններ կառուցել, անտոկոս երկարաժամկետ վարկեր տրամադրել, հարկերից ազատել և այլն: Առաջարկի հիմքում ընկած էր Ադրբեջանում բամբակագործական շրջաններում աշխատուժի պակասը, Հայաստանում՝ սփյուռքահայերի ներգաղթի ծրագրով տեղափոխվողների բնակության պայմանների ստեղծումը:

Ադրբեջանցիների տեղափոխության գործընթացն իրականացնում է Ադրբեջանում ստեղծված հանձնաժողովը: Սույն զեկույցում ցույց է տրվում, թե Ադրբեջանում ստեղծված հանձնաժողովը ինչպես սկսեց տեղափոխության գործընթացը, և ինչպես հաջողությամբ տապալեց այն: Մարդկանց մի մասին տարան, ունեցվածը ձեռքից վերցրին և տեղի հայկական ու ադրբեջանական գյուղերի բնակչությանը հարկադրեցին իրենց միջոցներով ապահովել նրանց կեցության պայմանները: Գնացածների մի մասը վերադարձավ Հայաստան, կամ նրանց վերադարձրին: Այս գործընթացով խիստ ոգևորված՝ 1950 թ. սկսած Ադրբեջանի իշխանություններն անընդհատ դիմում էին Հայաստանի իշխանություններին՝ տեղափոխության ծրագիրը

շարունակելու խնդրանքով, բայց Ադրբեջանում սնանկացած ադրբեջանցիներին ետ ընդունելու և Հայաստանի միջոցներով նրանց կեցության պայմաններ ստեղծելու մղձավանջի մեջ հայտնված Հայաստանի իշխանությունները մերժում էին այդ առաջարկները: 1952 թ. հունվարի մի փաստաթղթից պարզ է դառնում, որ մինչև 1952 թ. Ադրբեջանում մնացել են 39.870 տեղափոխվածներ: Անհայտ է, թե 1952-ից հետո նրանցից քանիսն են վերադարձել Հայաստան:

Ադրբեջանական իշխանությունների կողմից տապալված այս տեղափոխությունը «հայերի կողմից հարյուրհազարավոր ադրբեջանցիների դեմ իրականացված ցեղասպանություն», «դեպորտացիա» որակումներով Ադրբեջանում լայնորեն տիրաժավորվում է՝ ավելացնելով ադրբեջանական էթնիկական ինքնության ձևավորման հայատյացության բաղադրիչը:

**Մարգո Չազյան** (Հայաստան, Երևան)  
ՀՀ-ԻԻՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏՈՒՄ

**Марго Зазян** (Армения, Ереван)  
СОТРУДНИЧЕСТВО МЕЖДУ РА И ИРИ В  
ЭНЕРГЕТИЧЕСКОЙ СФЕРЕ

**Margo Zazyan** (Armenia, Yerevan)  
RA-IRI COOPERATION IN THE ENERGY SECTOR

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության հարաբերությունները բազմոլորտ են ու ընդգրկում են երկկողմ համագործակցության լայն շրջանակ: Ինչպես փաստում են երկու պետությունների միջև առկա հարաբերությունների իրավապայմանագրային հիմքերը՝ երկկողմ հարաբերություններում առաջնային կարևորություն ունեն էներգետիկ, տնտեսական, անվտանգության ոլորտները:

Ձեկույցում ներկայացվելու են Հայաստան-Իրան էներգետիկ ծրագրերը և գնահատվելու է դրանց կարևորությունը ինչպես տնտեսական, այնպես էլ անվտանգության տեսանկյունից: Անդրադարձ է կատարվելու Հայաստանի և Իրանի ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով կնքված փաստաթղթերին և դրանց իրագործմանը:

Սահմանվելու է էներգետիկ անվտանգություն եզրույթը և այն դիտարկվելու է տնտեսական անվտանգության կարևոր բաղադրիչ, որը բնութագրում է պետության պաշտպանվածությունը այլ պետությունների կողմից էներգակիրների մատակարարումը որպես քաղաքական, տնտեսական և/կամ այլ բնույթի ճնշում գործադրելու միջոց կիրառելու հնարավորությունից:

Ձեկույցում գնահատվելու է Հայաստանի դերը ԻԻՀ տեսանկյունից, որպես տարանցիկ երկիր և Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության խորացման փոխշահավետությունը:

Հարկ է նշել, որ ՀՀ ցանկացած իշխանություն պետք է առաջ տանի և ապահովի օրակարգում առկա ծրագրերի իրականացման շարունակականությունը:

2023 թ. նոյեմբերին ՀՀ կառավարությունը ներկայացրել է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, որն իրենից ենթադրում է բաց սահմաններ, ապաշրջափակված ենթակառուցվածքներ, ակտիվ տնտեսական, քաղաքական և մշակութային կապեր: Նախագիծը վերաբերում է նոր ենթակառուցվածքների ստեղծմանը կամ գոյություն ունեցողների որակի բարելավմանը: Պարզ է դառնում, որ նախագծի իրականացման տրամաբանությունից են բխում նաև Հայաստան-Իրան բարձրավոլտ էլեկտրահաղորդման 3-րդ գծի շինարարությունը ավարտին հասցնելը և առկա ծրագրերի իրականացումն ու անխափան իրագործումը:

Կարևոր է նկատել, որ ՀՀ-ԻԻՀ համագործակցությունը էներգետիկ ոլորտում չի վերաբերում միայն երկու պետությունների հարաբերություններին, այլ ընդգրկում է տարածաշրջանը և ազդեցություն ունենում աշխարհաքաղաքական գործընթացներում:

**Մարիամ Պետրոսյան** (Հայաստան, Երևան)  
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՊԵՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ  
ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐ. ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ԼՈԿԱԼ ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

**Мариам Петросян** (Армения, Ереван)  
ВОЕННАЯ ФОТОГРАФИЯ КАК ВАЖНЫЙ ИСТОЧНИК  
ИСТОРИЧЕСКОГО ПОДТВЕРЖДЕНИЯ. ЛОКАЛЬНАЯ И  
ЦИВИЛИЗАЦИОННАЯ ЦЕННОСТЬ ФОТОГРАФИИ

**Mariam Petrosyan** (Armenia, Yerevan)  
WAR PHOTOGRAPHY AS AN IMPORTANT SOURCE  
OF HISTORICAL VALIDATION. THE LOCAL  
AND CIVILIZATIONAL VALUE OF THE PHOTOGRAPH

Պատերազմական լուսանկարչությունը լուսանկարչության կարևոր և առանձին՝ կայացած ճյուղերից է: Այն առանձնահատուկ նշանակություն ունի պատմական տարբեր իրողությունների արձանագրման և վավերացման գործում: Տվյալ դեպքում դիտարկում ենք Առաջին Արցախյան պատերազմի լուսանկարները, որպես պատերազմի պատմության վավերացման սկզբնաղբյուր ու կարևոր քարոզչական գործիք: Արցախյան պատերազմների ընթացքում տարբեր ֆոտոլրագրողների գործունեության շնորհիվ հավաքվել է հարուստ տեսողական (վիզուալ) նյութ, որն ուսումնասիրված չէ: Ուստի այդ նյութի՝ հատկապես լուսանկարների ուսումնասիրությունը և հանրահռչակումը կարևոր գիտական նշանակություն ունեն, հատկապես համաշխարհային պատմության և ներկա աշխարհաքաղաքական իրողությունների համատեքստում: Լուսանկարը մեզ ցույց է տալիս այն իրողություններն ու իրավիճակները, որոնցում մենք չենք եղել՝ հետևաբար կենդանի շփում այդ իրավիճակների հետ չէինք կարող ունենալ: Չնայած այս ամենին, մենք դառնում ենք լուսանկարի փոխանցած տեղեկատվության կրողը և հնա-

րավորություն ստանում աշխատել այդ տեղեկատվության հետ: Այս դեպքում մեզ համար կարևոր հետազոտական խնդիր է լուսանկարի հանրահոշակումը և բազմաշերտ ուսումնասիրությունը, որի բաղկացուցիչ մասն է նաև լոկալ օրինակների համեմատումը գլոբալի հետ: Իր ծագման օրվանից ձեռք բերելով տարբեր արժեքներ և դառնալով բազմաժանր, բազմաֆունկցիոնալ, բազմաշերտ՝ լուսանկարը վաստակել է քաղաքակրթական արժեք լինելու «իրավունքը» և հայկական օրինակները ևս դրա բաղկացուցիչ մասն են կազմում: Ուստի Արցախյան պատերազմի ժամանակ արված լուսանկարների ուսումնասիրությունը և դրանց դիտարկումը, որպես համաշխարհային ռազմական լուսանկարչության բաղկացուցիչ մաս, առաջնային խնդիր է մեզ համար:

**Մելինե Անումյան** (Հայաստան, Երևան)

ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

**Мелине Анумян** (Армения, Ереван)

ПОЛИТИКА ТУРЦИИ В ОТНОШЕНИИ АРМЯНСКОГО  
АРХИТЕКТУРНОГО НАСЛЕДИЯ

**Meline Anumyan** (Armenia, Yerevan)

POLICY OF TURKEY TOWARDS THE ARMENIAN  
ARCHITECTURAL HERITAGE

Ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող հայկական ճարտարապետական ժառանգության կարգավիճակը և վերջինիս նկատմամբ Թուրքիայի պարտավորություններն ամրագրված են Լոզանի պայմանագրով: Մասնավորապես, պայմանագրի 42-րդ հոդվածի համաձայն՝ «Թուրքիայի կառավարությունը պարտավորվում է ամեն ձևով պահպանել փոքրամասնությունների եկեղեցիները, սինագոգները, գերեզմանները և մյուս կրոնական հաստատությունները»:



Չնայած միջազգային պայմանագրով հաստատված պարտավորություններին՝ Թուրքիայի ամբողջ պատմության ընթացքում արձանագրվել է հայկական և փոքրամասնություն համարվող այլ ազգերի ճարտարապետական հուշարձանների հետևողական ոչնչացում, որը կատարվել է և՛ առերևույթ ոչ միտումնավոր, որպես բնության արհավիրքների հետևանք, և՛ որպես բացահայտ վերացման քաղաքականություն:

Այս հարցում պետական մակարդակով իրականացված քաղաքականության հետևանքով ներկայում ականատես ենք շատ տխուր պատկերի, ըստ որի՝ ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում և նախկինում հայաբնակ շրջաններում հայկական հուշարձանները կամ գրեթե լիովին անհետացել են, կամ գտնվում են ծայրահեղ վատթար վիճակում:

Թուրքիան հայկական ճարտարապետական ժառանգության ոչնչացումն իրականացնում է հետևյալ մեթոդներով.

### *1. Ուղղակի ոչնչացում*

Այս մեթոդը կիրառվում է ճարտարապետական կամ պատմական հուշարձանների բացահայտ վերացմամբ: Վերջին տարիներին դրա ամենավառ օրինակը կարելի է համարել 2013 թ. Մուշի Քալե թաղամասում սկսված հայկական տները քանդելու գործընթացը: Թուրքական իշխանությունները ավերեցին մոտ 500 նման տուն՝ այդ թաղամասում նոր բնակելի շենքեր կառուցելու պատճառաբանությամբ: Նմանատիպ գործընթաց շարունակում է կատարվել նաև Դիարբեքիրում և այլուր:

### *2. Հուշարձանների բարձիթողի վիճակ*

Հայկական ճարտարապետական կոթողներն անտերության մատնելով կամ այնտեղ մարդկանց բնակեցնելով՝ թուրքական պետությունը միտումնավոր կերպով վարում է դրանք վերջնականապես ոչնչացնելու քաղաքականություն: Շատ դեպքերում պատմական հուշարձանները ենթարկվում են բնության արհավիրքներին կամ գանձ որոնողների անօրեն գործողություններին և տարեցտարի կորցնում ոչ միայն իրենց նախնական տեսքը,

այլև՝ վերջնականապես անհետանում: Նման օրինակ է դարձյալ Մուշում գտնվող Սուրբ Կարապետ վանական համալիրը, որից այսօր գրեթե ոչինչ չի մնացել:

### *3. Պատմական հուշարձանի կարգավիճակի փոփոխություն*

Թուրքիայի իշխանությունները երբեմն իրենց հովանու տակ են վերցնում որևէ պատմական հուշարձան կամ որոշում վերականգնել այն: Սակայն իրական նպատակը ոչ թե պատմական ժառանգության պահպանումն է, այլ՝ պատմական հիշողության աղավաղումը, քանի որ նման դեպքերում եկեղեցին վերածվում է մշակութային կենտրոնի, գրադարանի կամ այլ օբյեկտի՝ տարիների ընթացքում կորցնելով իր հիմնական գործառույթը: Վերջին տարիների թուրքական մամուլը լի է նման դեպքերով, սակայն ամենավառ օրինակը Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին է, որտեղ թեև թուրքերը «մեծահոգաբար» թույլ են տվել տարեկան ընդամենը մեկ անգամ պատարագ մատուցել, սակայն այն գործում է թանգարանի կարգավիճակով: Հիշեցնենք նաև մզկիթի վերածված եկեղեցիների մասին, որոնք պատկառելի թիվ են կազմում: Ամենավառ օրինակը Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին է:

Այսպիսով՝ Թուրքիան վերջին տարիներին թեև փորձում է առերևույթ հայկական և ազգային այլ փոքրամասնություններին պատկանող ժառանգությունը պահպանելու քայլեր անել, սակայն իրական նպատակը նման հուշարձանների կարգավիճակի փոփոխությունն է՝ նրանց գործառույթներն աղավաղելու միջոցով: Բացի այդ՝ Թուրքիան չի թաքցնում, որ նպատակ ունի նաև ֆինանսական շահ ապահովել նման հուշարձաններ զբոսաշրջիկների այցերից:

**Միքայել Յալանուզյան** (Հայաստան, Երևան)  
ՊԱՆԹՅՈՒՐԻՔԻԶՄԻ ԵՎ ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄԻ ԽՈՍՈՒՅԹԸ  
1988–1989 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԵՎ  
ՏՊԱԳԻՐ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐՈՒՄ

**Микаел Яланузян** (Армения, Ереван)  
ДИСКУРС ПАНТЮРКИЗМА И ПАНИСЛАМИЗМА В  
1988–89 ГОДАХ В АРМЯНСКОЙ ПРЕССЕ И ПЕЧАТНЫХ  
НЕОФИЦИАЛЬНЫХ ОРГАНАХ

**Mikael Yalanuzyan** (Armenia, Yerevan)  
THE DISCOURSE OF PAN-TURKISM AND PAN-ISLAMISM IN  
1988–1989 IN THE ARMENIAN PRESS AND NON-OFFICIAL  
PRINTED ORGANS

Ինչպես հայտնի է, 1988 թ. փետրվարին սկսված շարժումը, բացի Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի լուծման պահանջից, ուներ նաև մի շարք այլ՝ զուգահեռ ընթացող քաղաքական ու սոցիալ-մշակութային պահանջներ: Բնապահպանական խնդիրները, հայոց լեզվի պահպանության, հայկական դպրոցների, սոցիալական արդարության և այլ հարցերը ընդհանրություն ունեին նաև որպես ուղղակիորեն չարտահայտվող անկախության պահանջ:

1988 թ. շարժման սկզբում հանրային խոսույթում քննարկվող խնդիրների թվում էր նաև պանթյուրքիզմի և պանիսլամիզմի պատմաքաղաքական գործոնը, որին անդրադառնում էին ինչպես հանրահավաքներում, այնպես էլ նոր ձևավորվող ու ոչ պաշտոնական տպագիր միջոցներում: Պանթյուրքիզմի այս վաղ քննարկումը 1988 թ. շարժման ընթացքում աստիճանաբար զարգանում է, ստանում քաղաքական խոր բովանդակություն, որի հետագա դրսևորումներից մեկը կարելի է համարել «Երրորդ ուժի բացառման» հայտնի թեզը:

Ուշագրավ է, որ դեռևս 1987 թ. հոկտեմբերին, ապա՝ դեկտեմբերին Խորհրդային Հայաստանում ստեղծված տպագիր

երկու ոչ պաշտոնական օրգանները՝ «Անկախությունը» և «Հայ դատը», նախքան հանրահավաքների լայնորեն տարածումն, արդեն անդրադառնում էին պանթյուրքիզմի խնդրին: 1988թ. մարտի 22-ին պանթյուրքիզմի և պանիսլամիզմի մասին թռուցիկ է տարածվում նաև Ղարաբաղ կոմիտեի անունից, որի հեղինակը Վազգեն Մանուկյանն էր: Թռուցիկի ամբողջական տեքստը տպագրված է Վազգեն Մանուկյանի «Հայկական երազանքը գոյատևման փակուղում» գրքում (Երևան, 2002, էջ 5): Հայաստանում լույս տեսնող թերթերի, ոչ պաշտոնական տպագիր օրգանների և այլ նյութերի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ պանթյուրքիզմի գործոնը հայկական հասարակական քաղաքական խոսույթում քննարկվել է Ղարաբաղյան շարժման սկզբից: Հաջորդող տարիներին այս խոսույթն աստիճանաբար ընդլայնվել է և ստացել հայ-թուրքական հարաբերությունների ընդհանուր բնույթ՝ ներառելով բազմաթիվ այլ ուղղություններ:

Զեկույցում ներկայացվելու են 1988–1989 թթ. հայկական մամուլում, ոչ պաշտոնական տպագիր օրգաններում և այլ աղբյուրներում պանթյուրքիզմի վերաբերյալ առկա քննարկումները, դրանց հիմնական ուղղություններն ու հանրային կարծիքի գնահատականները: Ներկայացվող թեման կարևոր է Հայաստանի անկախության շարժումը, արտաքին քաղաքական հիմնական ուղղությունները գնահատելու և պետության կայացման ընթացքն առավել լավ հասկանալու համար:

**Մխիթար Գաբրիելյան** (Հայաստան, Երևան)  
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
«ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ» ԽՆԴԻՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ.  
ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

**Мхитар Габриелян** (Армения, Ереван)  
ПРОБЛЕМА «КАРТИРОВАНИЯ» АРМЯНСКОГО КУЛЬТУРНОГО  
НАСЛЕДИЯ НА КАВКАЗЕ: ЭТНОЛОГИЧЕСКАЯ ПЕРСПЕКТИВА

**Mkhitar Gabrielyan** (Armenia, Yerevan)  
THE PROBLEM OF “MAPPING” THE ARMENIAN CULTURAL  
HERITAGE IN THE CAUCASUS: ETHNOLOGICAL PERSPECTIVE

Կովկասյան տարածաշրջանում հայկական մշակութային ներկայությունն ունի հազարամյակների պատմություն և ներառում է ինչպես բուն Հայաստանից բացի Հարավային Կովկասի տարբեր արեալները (ներկայիս Վրաստանի և Ադրբեջանի Հանրապետություն), այնպես էլ Հյուսիսային Կովկասը. Դաղստանից մինչև Ադրդեյա (4-րդ դարի քրիստոնեական հուշարձաններից մինչև պատմաազգագրական տեսանկյունից ուշագրավ չերքեզահայեր):

Պատմագիտական ուսումնասիրություններից բացի, 19-րդ դարից սկսած իրականացվել են մեծաթիվ ազգագրական ուսումնասիրություններ, որ վերաբերել են տարբեր պատմական ժամանակահատվածներում Կովկասի տարբեր հատվածներում հաստատված հայերին (չերքեզահայեր, համշենահայեր, Դերբենտի, Ղզլարի, Մոզդուկի հայեր և այլ խմբեր): Չնայած այս ամենին, Կովկասում հայկական մշակութային ներկայությունը ամփոփ ազգաբանական ու լայն առումով պատմագիտական տեսանկյուններից դեռևս ամբողջացված չէ: Ի մասնավորի, բավարար չափով դիտարկված չեն այն փոփոխությունները, որոնց ենթարկվում էին տարածաշրջանում բնակվող հայերը խորհրդային տարիներին այն դեպքում, երբ նրանք մի կողմից ակտիվ ներգրավված էին տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, լեզ-

վական, կրթական ու մշակութային զարգացման գործընթացներում, մյուս կողմից՝ ենթարկվում էին բոլոր այն ճնշումներին (կուլակաթափություն, բռնի տեղահանություններ, տեղաշարժեր), որոնց ենթարկվում էին մյուս ժողովուրդները:

Համակողմանի քննության (առանձին բացառություններով) չեն ենթարկվել նաև տարբեր խմբերի տոնածիսական կյանքի համալիրները, դրանց զարգացումներն ու փոխակերպումները վերջին մեկուկես հարյուրամյակում, ընտանիքն ու ներընտանեկան հարաբերությունները, բազմէթնիկ միջավայրերում ազգայինի պահպանման ու փոխանցման տարբեր մեխանիզմները:

Այսինքն, ազգաբանական տեսանկյունից դիտարկելիս, Կովկասյան տարածաշրջանում հայկական մշակութային ներկայության ուսումնասիրությունը լրացուցիչ հնարավորություն է ինչպես այդ ներկայության տարբեր փուլերը, պատճառները, ազդեցություններն ու փոխազդեցությունները դիտարկելու, այնպես էլ դրանք զարգացման մեջ ուսումնասիրելու տեսանկյունից: Մյուս կողմից, քարտեզագրումը հնարավորություն է հասկանալու, թե ինչպես էին հայության տարբեր խմբերը (չերքեզահայեր, համշենահայեր, այլ խմբեր) պահպանում ու սերնդեսերունդ փոխանցում տեղական մշակութային առանձնահատկությունները:

Խնդիրը, բացի տեսականից, ունի կարևոր կիրառական, քաղաքական նշանակություն: Այսօր Կովկասում քաղաքական ու աշխարհաքաղաքական անկանխատեսելի զարգացումների պայմաններում մշակույթն ու հանուն մշակույթի պայքարը վերածվել են կարևոր կռվանների: Պատահական չէ, որ հատկապես ադրբեջանական իշխանությունները ձեռնամուխ են եղել հայկական մշակութային ներկայության հետքերի վերացմանը, ագրեսիվ յուրացմանը, ըստ այդմ՝ պատմությունը վերաշարադրելու գործին: Նյութերի նախնական դիտարկումը ցույց է տալիս, որ ադրբեջանական կողմը չի բավարարվելու միայն ներկայիս Ադրբեջանի տարածքով, այլ ամեն ինչ անելու է Կով-

կասում հայկական ներկայության իրողությունները ընդհանրապես նվազագույնի հասցնելու համար:

Ձեկույցում ավելի մանրամասն դիտարկվելու են ինչպես վերը նշված խնդիրները, այլև անդրադարձ է կատարվելու «քարտեզագրման» տեսական, մեթոդաբանական հիմքերին ու հիմնավորումներին, ինչպես նաև այդ ուղղությամբ ծավալվելիք գործողություններին:

**Նելլի Մինասյան** (Հայաստան, Երևան)  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ  
ՊԱՆԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

**Нелли Минасян** (Армения, Ереван)  
ЮЖНЫЙ КАВКАЗ В ПАНТЮРКСКИХ ПЛАНАХ ТУРЦИИ

**Nelly Minasyan** (Armenia, Yerevan)  
THE SOUTH CAUCASUS IN TURKEY'S PAN-TURKIC PLANS

Հարավային Կովկասի (Այսրկովկասի) նկատմամբ թուրքական պետության հետաքրքրությունները սկսվել են դեռևս Օսմանյան կայսրության շրջանում: 19-րդ դարի վերջին, երբ ձևավորվեց պանթյուրքիզմի գաղափարախոսությունը բնականաբար մեծ տեղ հատկացվեց տարածաշրջանին: Երիտթուրքերի իշխանության շրջանից պանթյուրքիզմը դարձավ պետական գաղափարախոսության մաս: Այն իր սուր դրսևորումը ստացավ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ նրանք փորձում էին գրավել Հարավային Կովկասը և դուրս գալ Կասպից ծովի ավազան: Խորհրդային Միության գոյության տարիներին պանթյուրքիզմի գաղափարները/ծրագրերը ավելի շատ գաղտնի բնույթ էին կրում: Սակայն իրավիճակը փոխվեց ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ մի կողմից թուրք բարձրաստիճան պաշտոնյաները սկսեցին խոսել պանթյուրքիզմի մասին, մյուս կողմից քայլեր ձեռնարկեցին դրա ինստիտուցիոնալացման ուղղությամբ:

Պանթյուրքական ծրագրերը ենթադրում են Թուրքիայի գլխավորությամբ միավորել թյուրքախոս բոլոր պետություններին ու ժողովուրդներին՝ Ադրիատիկ ծովից մինչև Չինական մեծ պատ: Այս մոտեցումներով թուրքական ղեկավարությունը 1990-ական թթ. ձեռնամուխ եղավ քաղաքական, տնտեսական ու մշակութային բնույթի կառույցների ու կազմակերպությունների ստեղծմանը: Մասնավորապես ուշադրության է արժանի Թյուրքական համագործակցության և զարգացման գործակալությունն ու Թյուրքական պետությունների կազմակերպությունը: Վերջինը հանդիսանում է ինտեգրացիոն կառույց՝ ըստ էության ներկայացնելով պանթյուրքիզմի ծրագրերի արդիականացված տարբերակը, որը համապատասխանում է արդի միջազգային հարաբերությունների սկզբունքներին:

Հարավային Կովկասը կարևոր նշանակություն ունի Թուրքիայի պանթյուրքական ծրագրերի համար, ինչպես աշխարհագրական, այնպես էլ ռազմավարական առումներով: Աշխարհագրական առումով Հարավային Կովկասը կամուրջ է Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքախոս պետությունների միջև: Ռազմավարական տեսանկյունից Հարավային Կովկասը Թուրքիայի կենտրոնասիական քաղաքականության հիմքն է, քանի որ տարածաշրջանում ամբողջական ազդեցության հաստատման դեպքում միայն նա կկարողանա ռազմաքաղաքական ազդեցության հասնել Կենտրոնական Ասիայում: Այս տեսանկյունից Թուրքիայի համար կարևոր է Ադրբեյջանի դերը: Թուրքիան, օգտագործելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդիրը, կարողացավ սերտ համագործակցություն հաստատել Ադրբեյջանի հետ՝ ըստ էության այնտեղ հաստատելով իր ազդեցությունը: Թերևս այստեղ տեղին է նշել նաև «մեկ ազգ, երկու պետության» կարգախոսը, որն արտացոլում է երկու պետությունների միջև առկա դաշնակցային հարաբերությունների բնույթը:



Այսպիսով, Թուրքիայի պանթյուրքական ծրագրերը նախորդ տասնամյակների ընթացքում ենթարկվելով կերպափոխությունների՝ շարունակում են այդ երկրի արտաքին քաղաքական դոկտրինների մասը կազմել: Ներկայումս պանթյուրքական ծրագրերը վերածվել են թյուրքական ինտեգրացիայի, երբ Թուրքիայի հիմնական նպատակն է հասնել թյուրքախոս պետությունների հետ ռազմաքաղաքական դաշինքի ստեղծմանը: Այսպիսի ծրագրերի իրականացման համար Հարավային Կովկասն ունի կարևոր, եթե ոչ կենսական նշանակություն, ուստի Թուրքիայի ռազմավարական նպատակն է իր ռազմաքաղաքական ազդեցությունը հաստատել այս տարածաշրջանում:

**Ռուբեն Հովսեփյան** (Հայաստան, Երևան)  
ԱՐՅԱԽԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ  
ՇԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**Рубен Овсепян** (Армения, Ереван)  
ПРОБЛЕМЫ ИССЛЕДОВАНИЯ И СОХРАНЕНИЯ ИСЛАМСКИХ  
ПАМЯТНИКОВ АРЦАХА

**Ruben Hovsepyan** (Armenia, Yerevan)  
PROBLEMS OF RESEARCH AND PRESERVATION OF ISLAMIC  
MONUMENTS OF ARTSAKH

Արցախի տարածքում գտնվող հուշարձանների միայն մոտ մեկ տոկոսն են կազմում մահմեդական հուշարձանները: Դրանց գերակշիռ մեծամասնությունը պատկանում է 19-րդ դարին և 20-րդ դարասկզբին, իսկ մոտ երկու տասնյակը՝ 14–16-րդ դարերին: Կան նաև 18-րդ դարի առանձին օրինակներ: Իսլամական մշակութային ժառանգության հիմնական մասն են կազմում մզկիթները և դամբարանները:

Դրանք գլխավորապես գտնվում են Արցախի հարթավայրային և նախալեռնային հատվածում՝ բացառությամբ Շուշի քաղաքի մահմեդական հուշարձանների:

Արցախի մահմեդական հուշարձանների զգալի մասը քիչ հետազոտված է: Խորհրդային տարիներին՝ մասնավորապես 1940–1970-ական թվականներին խորհրդային Ադրբեջանի տարածքում գտնվող իսլամական տարաբնույթ հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղված հետազոտողները իրենց ուշադրությունը սևեռել են առավելապես ակնհայտ մահմեդական մշակութային և քաղաքական միջավայրում ստեղծված հուշարձաններին:

Արցախի տարածքում գտնվող մահմեդական հուշարձաններին անդրադարձ է կատարվել շատ հպանցիկ: Հիմնականում դիտարկվել են դամբարանների որոշ օրինակներ, որոնք ակնհայտ տարբերվում էին ընդհանուրից, քանի որ կրում էին քրիստոնեական մշակութային միջավայրից վերցված ազդեցություն, ուստի և հետաքրքրել էին խորհրդային հետազոտողներին: Ադրբեջանցի հետազոտողները, անդրադարձ կատարելով այս խնդրին, փորձում էին առավելապես ընդհանրական, զգույշ մեկնաբանություն տալ՝ հաճախ շրջանցելով Արցախի հայկական մշակութային ժառանգությունը և պատմական միջավայրը: Խորհրդային այլ հետազոտողները, փաստեր բերելով, հաճախ ուղղակի կապ էին տեսնում կամ ենթադրում այդ կապը հայկական մշակույթի հետ:

Հուշարձանների նկարագրության, ուսումնասիրության գործում զգալի աշխատանք են կատարել Արցախում ուսումնասիրություններ կատարած հայ հետազոտողները՝ լուսանկարելով, գծագրելով, տալով դրանց նկարագրությունը: Արցախի տարածքում գտնվող մահմեդական հուշարձանների զգալի մասի նկարագրությունը առաջին անգամ տալիս են հենց հայ հետազոտողները:

Մահմեդական հուշարձանները մշտապես գտնվել են Արցախի Հանրապետության պետական մարմինների հոգածության ներքո:

Արցախի տարածքում գտնվող մահմեդական հուշարձանների հպանցիկ դիտարկումը թույլ է տալիս խոսել հայկական մշակութային միջավայրից կրած ազդեցության մասին: Խոսքը վերաբերում է ոչ միայն դամբարաններին, այլ նաև մզկիթներին: Ուշագրավ է, որ վաղ մզկիթները, ինչպես նաև 19-րդ դարում կառուցվածները հարևան են Արցախի միջնադարյան միանավ եկեղեցական սրահներին ու գյուղական եկեղեցիներին, իսկ քաղաքային մզկիթների պարագայում դիտարկվում են զուգահեռներ Արցախի միջնադարյան քրիստոնեական ճարտարապետության մեջ: Առկա նյութերի հիման վրա կարող ենք փաստել, որ Արցախում 17-րդ դարից ավելի վաղ մզկիթներ փաստված չեն, իսկ մահմեդական դամբարանները փաստվում են 14-րդ դարից:

Այսպիսով, սույն զեկուցման նպատակն է ներկայացնել Արցախի տարածքում գտնվող իսլամական հուշարձանները, դրանց տեսակները, բնորոշ կողմերը, ընդհանուր բնույթն ու առանձնահատկությունները, ինչպես նաև անդրադարձ կատարել այդ հուշարձանների հետազոտության հետ կապված խնդիրներին, քանի որ նկատելի է Ադրբեջանի կողմից փաստերի ուղղակի կեղծման և նորովի մեկնաբանման միտում, որով փորձ է արվում լիովին այլ կերպ ներկայացնել իսլամական մշակութային ժառանգությունը և չնկատել շատ իրողություններ:

**Վահագն Ասրյան** (Ռուսաստան, Դոնի Ռոստով)  
ՌՈՒՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿԻ» ՄԱՍԻՆ

**Ваагн Асрян** (Россия, Ростов-на-Дону)  
РОССИЙСКИЙ ВЗГЛЯД НА «ПЕРЕКРЕСТОК МИРА»  
ПРАВИТЕЛЬСТВА РА

**Vahagn Asryan** (Russia, Rostov on Don)  
RUSSIAN VIEW ON THE “CROSSROADS OF THE PEACE”  
OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

2023 թ.-ի հոկտեմբերի 17-ին Ստրասբուրգում՝ Եվրոպական խորհրդարանի առջև ունեցած ելույթում ներկայացնելով 2020 թվականի պատերազմից ի վեր ստեղծված վիճակը վարչապետ Փաշինյանը նշեց, որ եկել է Եվրոպական խորհրդարան խաղաղության ուղերձով և շարունակելու է խաղաղության օրակարգը, Հայաստանը պատրաստ է վերականգնել Մեղրիի երկաթուղին, ավտոճանապարհ կառուցել, պարզեցնել ընթացակարգերը, ապահովել անվտանգությունը, բայց ոչ որպես արտատարածքային միջանցք.– «Հայաստանում այս նախագիծն անվանում ենք Հայկական Խաչմերուկ: Բայց կարծում եմ՝ այս նախագիծն ավելի տարածաշրջանացնելու, ռեբրենդինգի ենթարկելու և այստեղ Եվրոպական խորհրդարանի բարձր ամբիոնից խաղաղության խաչմերուկ անվանելու ժամանակն է»:

Սույն նախագիծը, կարճ ժամանակում ձեռք բերեց լայն ակտուալություն՝ դառնալով սուր բանավեճերի և շատ հաճախ իրար հակասող քննարկումների առարկա թե՛ քաղաքագետների և վերլուծաբանների, թե՛ հասարակական տարբեր շերտերի շրջանակներում, թե՛ Հայաստանում և թե՛ այդ խաչմերուկի հնարավոր շահառու երկրներում:

Զեկույցում ներկայացվում է նախագծի վերաբերյալ ռուսական համապատասխան շրջանակներում (պաշտոնական շրջա-

նակներ, մեդիա ոլորտ, քաղաքագետ-վերլուծաբաններ) շրջանառվող հիմնական տեսլականները, դրանց համեմատական վերլուծությունը ՀՀ Կառավարության մոտեցումների հետ և այդ ամենի վերաբերյալ հեղինակի վերլուծական մեկնաբանությունը:

Զեկույցի հիմնագաղափարն է ի ցույց դնել ոչ միայն «Խաղաղության խաչմերուկի» վերաբերյալ ռուսական տեսլականները, այլև հարյուրամյա պատմական հետհայացք գցելով բացահայտել դրանց պլանավորված բնույթ կրելը:

### **Վահե Ավետիսյան** (Հայաստան, Երևան)

ԿԻԼԻԿԻԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ  
ՄԻՋՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Vahe Avetisyan** (Armenia, Yerevan)

РОЛЬ КИЛИКИЙСКОГО АРМЯНСКОГО ЦАРСТВА В  
МЕЖХРИСТИАНСКОМ ДИАЛОГЕ

**Vahe Avetisyan** (Armenia, Yerevan)

THE ROLE OF THE CILICIAN ARMENIAN KINGDOM  
IN THE INTER-CHRISTIAN DIALOGUE

Կիլիկյան Հայկական պետությունն ի դեմս Լևոն Մեծագործի՝ ԺԲ դ. վերջին և ԺԳ դ. սկզբին Մերձավոր Արևելքի քրիստոնեական երկրների շարքում դարձավ այն յուրահատուկ միավորը, որտեղ անկախ բազմաթիվ խնդիրներին քրիստոնեական բոլոր խոշոր համայնքները ստացան ազատ գործելու ու երկխոսության մեջ զարգանալու հնարավորություններ: Համակեցության նման մոտեցումը մշակվել էր դեռևս նախորդ շրջանում՝ Ներսես Շնորհալու և Ներսես Համբրոնացու անմիջական մասնակցությամբ: Թագադրման նախապատրաստման շրջանում Լևոնը շարունակեց երկխոսությունը Բյուզանդական ու Լատին եկեղեցիների հետ՝ արդյունքում ստանալով թագ և՛ Կոստանդնուպոլսից, և՛ Հռոմից: Հատկապես

շոշափելի էր այս առումով Լատին եկեղեցու հետ մերձեցումը: Արևմուտքից թագ ստանալու գաղափարը համոզեց հայ աշխարհիկ ու հոգևոր ավագանուն գնալու ձևական մի շարք զիջումների Հռոմին: Կաթոլիկ եկեղեցուն արված զիջումները, ըստ ամենայնի, ունեին ավելի հեռագնա նպատակ՝ կապված Անտիոքը Կիլիկիային միացնելու Լևոն Մեծագործի նկրտումների հետ: Անտիոքի բարոնները կաթոլիկ ուխտի անդամներ էին, ուստի Լևոնը, լավ հասկանալով Լատին եկեղեցու դիրքորոշման կարևորությունն ու խուսափելու համար հետագայում խաչակրաց իշխանության միացման կապակցությամբ սպասվող հավանական անհամաձայնությունից, թագն ընդունում է նաև հռոմեական եկեղեցու անունից՝ արտաքուստ դառնալով Լատինական Արևելքի մաս:

Անտիոքի ժառանգության համար պայքարով պայմանավորված՝ Լևոնը մեծ ուշադրություն էր դարձնում նաև քաղաքում զգալի կշիռ ունեցող ասորական համայնքին: Մինչև թագավոր օծվելը, Լևոնը ասորիների վրա ազդելու ակնկալիքով հովանավորում էր Անտիոքում նստող, Միքայել Մեծ կաթողիկոսի (1166–1199 թթ.) դեմ ընդվզած եպիսկոպոս Թեոդորոս Բարվեհեբունին: 1192/3 թ. նա Կիլիկիայում ստանալով Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղայի ու Լևոնի օժանդակությունը՝ ի հակաթոռություն Միքայել Մեծի հռչակվում է ասորիների կաթողիկոս Հովհաննես անունով: Սակայն Գրիգոր Տղայի մահից (1193 թ.) շատ չանցած, նա ևս մահանում է և փոփոխված իրավիճակում նպատակահարմար է դառնում համագործակցությունը կաթողիկոս Միքայելի հետ:

Չնայած Լատին ու Հայ եկեղեցիների միության փորձերին, ԺԳ դ. բյուզանդական Ուղղափառ եկեղեցու հավատացյալներն իրենց կենտրոնների մեծ մասը պահպանեցին Կիլիկիայում: Դրանք հանդիսանում էին Անտիոքի բյուզանդական պատրիարքությանը ենթակա թեմեր, որոնցից կարևորներն էին Տարսնի, Անարգաբայի, Սելևկիայի միտրոպոլիտությունները, Մամես-

տիայի, Ադանայի, Պոմպեյոպոլիսի ու Մարտիրոսուպոլիսի ավտոկեֆալ ամբիոնները, իսկ մամլուքների կողմից Անտիոքի իշխանությունը 1268 թ. վերջնականապես գրավելուց հետո Անտիոքի Ուղղափառ պատրիարքության աթոռներն ամրապնդվեցին առավելապես Կիլիկիայում: 1210 թ. Կիլիկիայում փառահեղ ընդունելության է արժանանում Անտիոքի հունական պատրիարք (մելկիտ) Սիմեոն II Աբու Շաիրը (1206–1242 թթ.): 1211 թ. հունվարի 6-ին նա Սսում, Լևոնի և Ռայմունդ-Ռուբենի ներկայությամբ ժամերգություն է կատարում Բյուզանդական եկեղեցու հավատացյալների համար, ապա նրան շնորհվում են Տարսնում ու Մամեստիայում Լատին եկեղեցուն պատկանող որոշ վանքեր և տաճարներ: 1230-ական թթ. Կիլիկիայի ու Նիկիայի կայսրության միջև սկսված երկխոսության մեջ Սիմեոն II-ը նորից կենտրոնական դիրքում էր հանդես գալիս: Չնայած Բյուզանդիայի թուլացմանն ու Լատին եկեղեցու դիրքերի ուժեղացմանը Մերձավոր Արևելքում, Կիլիկիայում Հույն Ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը շարունակեց իր դերակատարությունը թագավորության արտաքին ու ներքին կյանքում: Ավելին, տարբեր պատճառներով այն ավելի համախմբված հանդես եկավ այդուհետ՝ ցուցաբերելով մեծ հավակնություններ:

**Վահրամ Բալայան** (Հայաստան, Երևան)  
ՇՈՒՇԻԻ ՀԱՅ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԴԵՐՈ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԵՏ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՊՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ  
(1813–1920 ԹԹ.)

**Ваграм Балаян** (Армения, Ереван)  
РОЛЬ АРМЯНСКИХ ПРОМЫШЛЕННИКОВ ШУШИ В  
УКРЕПЛЕНИИ ЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ СО СТРАНАМИ И  
ПОСЕЛЕНИЯМИ РЕГИОНА (1813–1920 ГГ.)

**Vahram Balayan** (Armenia, Yerevan)  
THE ROLE OF ARMENIAN INDUSTRIALISTS OF SHUSHI IN  
STRENGTHENING ECONOMIC TIES WITH THE COUNTRIES  
AND SETTLEMENTS OF THE REGION (1813–1920)

19-րդ դարի սկզբներից՝ ցարական տիրապետության հաստատման առաջին իսկ օրերից, Շուշին օրեցօր դառնում էր տարածաշրջանի վարչական, քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն:

Սկզբնական շրջանում բերդաքաղաքը հայտնի էր որպես արհեստագործական կենտրոն: Շուշեցի հայ ոսկերիչների և ադամանդագործների արտադրանքը սպառվում էր Ռուսաստանում, Ֆրանսիայում, Մերձավոր Արևելքի և Միջին Ասիայի երկրներում: Բերդաքաղաքում արտադրված կրաքարը, աղյուսը, փայտանյութը մեծ պահանջարկ ունեին հարևան գավառներում: Շուշիում գործված գորգերն ու կարպետները զարդարում էին Եվրոպայի, Ռուսաստանի և արևելքի երկրների պալատներն ու բնակարանները:

19-րդ դարի 70–80-ական թվականներից Շուշին ներքաշվեց համառուսաստանյան շուկայի մեջ: Հայ դրամատերերը իրենց միջոցները տեղափոխեցին արտադրության առավել շահավետ ոլորտներ՝ ստեղծելով զանազան գործարաններ ու ֆաբրիկաներ:

20-րդ դարի սկզբներին Շուշիում կային 570 արհեստանոց-



ներ, ֆաբրիկաներ, արտադրական կենտրոններ: Այդ գործարանների զգալի մասը զբաղվում էր մետաքսի արտադրությամբ: Այդ ուղղությամբ Ռուսաստանի երկրամասերի մեջ Արցախը գրավում էր 2-րդ տեղը և տալիս էր Անդրկովկասի մետաքսի արտադրության 35 տոկոսը: Շուշիում պատրաստած մետաքսաթելը և դրանից գործած կտորները բավականին որակյալ էին ու տարածված էին Պարսկաստանում, Մերձավոր Արևելքի երկրներում, Ռուսաստանում, Եվրոպայում: Շուշիի և գավառի մետաքսագործները սերտորեն կապված էին «Ա. և Վ. Սապոժնիկովներ», «Ա. Իլին որդիների հետ և Կ», «Ե.Ա. Սոկոլիկովա» մետաքսի առևտրով զբաղվող խոշորագույն ընկերությունների հետ:

19-րդ դարի վերջերին Այսրկովկասում հունդի աճեցման և տարածման գործը կենտրոնացված էր երեք ընտանիքների ձեռքում, որոնցից Տեր-Գրիգորյանները շուշեցի էին:

Շուշեցի առևտրականները «յապոն» անվանված հունդը ծովային ճանապարհով տեղափոխում էին Հունաստան, իսկ այնտեղից՝ Արցախ:

Շուշեցի մեծահարուստներ Խուբլարյանների և Սողոմոնյանների Ակնայում (Ադրամում) կառուցած սպիրտի ու գինու գործարաններից Կովկասի քաղաքներ, Ռուսաստան և Եվրոպական երկրներ 19-րդ դարի վերջերին արտահանում էին տարեկան 100.000 փուֆ տարբեր տեսակի խմիչքներ:

1891–1895 թթ. Շուշիում գործում էին կաշվի 6, օճառի 5, ներկարարական 10 և աղյուսի 2 գործարաններ, որոնց արտադրանքը հիմնականում սպառվում էր հարևան երկրներում ու շրջակա բնակավայրերում:

Քննարկվող ժամանակահատվածում Շուշին դարձել էր խոշոր առևտրական կենտրոն: Գերմանական «Ալգեման ցայտունգ» թերթը 1846 թ. նոյեմբերի 15-ի համարում գրել է. «Ղարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին, առանց չափազանցության, կարելի է համարել Կովկասյան Զիբրալթար»:

Թառույթանների, Հախումյանների, Խանդամիրյանների ընտանիքները Շուշիից հսկում էին մի մեծ առևտուր, որի միջոցով իրար էին կապում աշխարհի չորս ծայրերը՝ Չինաստանից մինչև Արևմտյան Եվրոպա, Հնդկաստանից մինչև Ռուսաստան և Սկանդինավյան երկրներ:

Տնտեսության խթանման նպատակով Շուշիում գործում էին նաև բանկեր և վարկային կազմակերպություններ:

### **Վանիկ Վիրաբյան** (Հայաստան, Երևան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ.  
ՀՀ ԱՐՏԱՔԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

### **Ваник Вирабян** (Армения, Ереван)

ПАДЕНИЕ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:  
ПРОВАЛ ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИХ РАСЧЕТОВ РА

### **Vanik Virabyan** (Armenia, Yerevan)

THE FALL OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA:  
THE FAILURE OF RA FOREIGN POLITICAL CALCULATIONS

Անկախության հռչակման պահին Հայաստանի Հանրապետությունը ի դեմս անգլիացիների կարծես թե արդեն ուներ հուսալի հովանավոր, ակնկալելով վերջիններիս դիվանագիտական-նազմական աջակցությունը: Հայկական կողմը չափից ավելի չարդարացված մեծ հույսեր կապեց հաղթող պետություններից սպասվող օգնության հետ՝ հօգուտ Հայաստանի հանգուցալուծելու սահմանների և ՀՀ ինքնիշխանության հարցը: Այդ խնդրում դաշնակիցները խաբուսիկ հույսեր ներշնչեցին բարեկամ համարվող հայ ժողովրդին, ինչն էլ պայմանավորեց ՀՀ ծախողումները արտաքին քաղաքականությունում և մասնավորապես արտաքին քաղաքական հաշվարկներում ու ընտրանքում, որին նպաստեցին նաև դաշնակիցների թղթային-դեկլարատիվ հայտարարությունները:

Այդուհանդերձ, անմիջական հարևանների՝ Ադրբեջանի ու Վրաստանի հետ Հայաստանի հարաբերությունները մնացին լարված: Պատերազմական բնույթի բախումները չվճռեցին կուտակված խնդիրները, սահմանների մասին հարցերը մնացին չլուծված: Չարդարացան սպասելիքները նաև Փարիզի վեհաժողովից: Պատմաքաղաքական իրողությունների արժևորման ու պատմական փաստերի իրատեսական գնահատումների առումով հետաքրքիր է Է. Անդերսենի և Գ. Պարխուլաձեի փորձագիտական եզրահանգումը: Համաձայն որի, Հայաստանի քաղաքական ղեկավարության միամտությունը արտահայտվեց հարավկովկասյան հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացման մեջ, կապված Հայաստանի առաջնորդների ենթադրության հետ, որ ծագած տարածքային բախումները մեծ տերությունների կողմից կլուծվեն իրենց օգտին որպես հատուցում և շնորհակալություն հայկական ջանքերի համար պատերազմի ժամանակ՝ ըստ այդմ հրաժարվելով հարևանների հետ դրանք բանակցությունների միջոցով լուծելուց:

Այդպիսի մոտեցման հետևանքով, 1918 թ. վերջին տեղի ունեցավ Վրաստանի հետ Հայաստանի ռազմական բախում, որը զգալի վնաս հասցրեց երկուսին էլ, իսկ Հայաստանի և Ադրբեջանի միջև սկսվեց երկարատև «հիբրիդային» պատերազմ վիճելի տարածքներին՝ Արցախին, Ջանգեզուրին և Նախիջևանին տիրելու համար: Այն ուղեկցվեց էթնիկական զտումներով և ընդհատվեց միայն երկու հանրապետությունների անկմամբ: Ըստ վերոնշյալ կովկասագետների, հենց այդ պատերազմի ընթացքում բրիտանական զինված ուժերի հրամանատարությունը, որի վրա դրված էր «օբյեկտիվ և ազնիվ միջնորդի» դերի ստանձնումը, փաստացի կանգնեցին նավթով հարուստ Ադրբեջանի կողքին:

Միայն 1920 թ. օգոստոսի 10-ին հաղթող տերությունները կարծես թե հաշվի առան Հայաստանի շահերը Թուրքիայի հետ

Սևրի հաշտության պայմանագիրը ստորագրելիս: Ըստ պայմանագրի, Հայաստանին պետք է տրվեր Օսմանյան կայսրության տարածքների մի մասը: Սակայն այդ պայմանները մնացին թղթի վրա: Թուրքիայում այդ պայմանագիրը չճանաչվեց ո՛չ սուլթանական կառավարության և ո՛չ քեմալականների կողմից, և ընդ որում հաղթող երկրներից ոչ մեկը ցանկություն չհայտնեց օգնել Հայաստանին այդ տարածքները միացնել ռազմական ուժի օգնությամբ: Արդյունքում այդ ամենը հանգեցրեց հայթորքական պատերազմի և Հայկական Առաջին Հանրապետության պարտության:

Ակնհայտ էր, որ Խորհրդային Ռուսաստանն անվերապահորեն չէր աջակցի Արևմտյան տերություններին կառչած ու բոլշևիկների դեմ անսքող թշնամության ձգտող քաղաքական ուժի կողմից կառավարվող հանրապետությանը, որի արևմտյան մտասևեռումը ճակատագրական եղավ, քանզի ուշացումով ակնհայտ դարձավ, որ ՀՀ քաղաքական ղեկավարությունը սխալվել է իր հաշվարկներում, նույնիսկ չփորձեց ավելի արագ գործել Խորհրդային աջակցությունը շահելու համար:

**Վարդգես Սաֆարյան** (Հայաստան, Երևան)

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՅԱԽՈՒՄ  
44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ (2021–2023 ԹԹ.)

**Вардгес Сафарян** (Армения, Ереван)

АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ В АРЦАХЕ ПОСЛЕ  
44-ДНЕВНОЙ ВОЙНЫ (2021–2023 ГГ.)

**Vardges Safaryan** (Armenia, Yerevan)

ARCHAEOLOGICAL RESEARCHES IN ARTSAKH AFTER  
THE 44-DAY WAR (2021–2023)

2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմից հետո հսկայական թվով հուշարձաններ մնացին ադրբեջանական վերահսկողու-

թյան տակ: Ադրբեջանը շարունակեց պատմամշակութային ժառանգության ոչնչացումը՝ խախտելով միջազգային բոլոր նորմերը:

2021 թ. սեպտեմբերի 27-ին Ստրասբուրգում ընդունվել է Լեոնային Ղարաբաղի հակամարտության հումանիտար հետևանքների վերաբերյալ ԵԽԽՎ քանաձև, որը դատապարտում է վերջին 30 տարիների ընթացքում Ադրբեջանում հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը:

2021–2022 թթ. Արցախի Հանրապետության հսկողության տակ մնացած հատվածում շարունակվել են հնագիտական ուսումնասիրությունները:

Զեկուցման նպատակն է ներկայացնել 44-օրյա պատերազմից հետո Արցախի տարածքում իրականացված հնագիտական հետազոտությունները:

Նշված ժամանակահատվածում պեղման-մաքրման աշխատանքներ են իրականացվել Արցախի Հանրապետության Մարտունու, Մարտակերտի և Ասկերանի շրջաններում:

Զեկույցում կներկայացվեն.

– Ծովատեղ գյուղի «Կարմիր եկեղեցու» պեղման արդյունքները (2022 թ. հուլիս 31 – օգոստոս 9): «Կարմիր եկեղեցին» Մելիք Փաշայանների դամբարանն է: Այն գտնվում է Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղի արևելյան կողմում, գերեզմանոցի տարածքում մի բլրակի վրա:

– ԱՀ Ասկերանի շրջանի Պատարա գյուղի Հավխաղաց լեռնաճյուղի փեշին «Շինատեղ» կամ «Տնտեղեր» անվան տակ հայտնի տեղամասում հողային աշխատանքների ժամանակ բացված վաղ քրիստոնեական սալարկղային դամբարանների զննման արդյունքները (2022 թ. օգոստոսին):

– Փրջամալ գյուղից մոտ 2,5–3 կմ արևելք (Ստեփանակերտ – Հասանաբադ խաչմերուկի կողքին) չհասած «Ալիբեյի թալա» կոչվող վայր, ճանապարհի աջ կողմում և «Զինավուր ծար» վայրում, Կոթ գյուղի մոտակայքով անցնող ճանապարհի հարավային կողմում բացված վաղ քրիստոնեական սալարկղային դամբարանադաշտը:

– ԱՀ Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի Մեծարանից Սբ. Հակոբավանքի վանքային համալիրում կատարած պեղումները (2023 թ. օգոստոսի 1 – օգոստոսի 21):

– ԱՀ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի արևելյան հատվածում, «Քինչի հող» տեղամասում հողային աշխատանքների ժամանակ բացահայտված է մ.թ.ա. VII–IV դդ. դամբարանադաշտի նյութերը (2023 թ փետրվար):

– ԱՀ ԿԳՄՄՆ «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն», ՊՈԱԿ-ի դաշտային աշխատանքների արդյունքում ի հայտ բերված նորահայտ հուշարձանները՝ խաչքարեր, խոնարհված եկեղեցիներ, գերեզմանոցներ, արձանագիր քարեր ու տապանաքարեր: Աշխատանքները հիմնականում տարվել են Մարտակերտի շրջանի Վաղուհաս, Հարությունագոմեր, Դրմբոն, Գետավան, Կիչան, Խնկավան, Ասկերանի շրջանի՝ Պատարա, Դահրավ, Քարագլուխ, Այգեստան, Մարտունու շրջանի՝ Խերխան, Ծովատեղ գյուղերի ու Ստեփանակերտ քաղաքի տարածքում:

### **Վիլեն Գաբրիելյան** (Հայաստան, Երևան)

ՑԱՐԱԿԱՆ ԲԱՔՈՒՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ  
ՆԵՐԴՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

### **Вилен Габриелян** (Армения, Ереван)

ЦАРСКИЙ БАКУ КАК ЦЕНТР ИНВЕСТИЦИЙ АРМЯНСКОГО  
КАПИТАЛА: ИСТОРИЯ И ПРАВО

### **Vilen Gabrielyan** (Armenia, Yerevan)

TZARIST BAKU AS AN INVESTMENT CENTER  
OF ARMENIAN CAPITAL: HISTORY AND LAW

Կուրի ծախսափնյակում և մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքներում հայերի բնակությունը թվագրվում է վաղ ժամանակներից: Հայերի ներկայության մատենագրական վկա-

յություններից է նաև Բուն Աղվանքում և Արցախ-Ուտիքում Վաչագան Բարեպաշտի թագավորության հանգամանքը:

Նոր ժամանակներում երկրամասի հայահոծ խոշոր կենտրոններից էր նաև Բաքու քաղաքը, ուր, հատկապես նավթարդյունաբերության զարգացման շրջանում, նկատվեց հայ բնակչության շարունակական աճ: Գիտելիքների և բնատուր գործարարական տաղանդի շնորհիվ երկրամասի հայերը աստիճանաբար մեծ ազդեցություն ձեռք բերեցին Բաքվի սոցիալ-տնտեսական կյանքում: Մեծ էր հայկական կապիտալի ներդրումը հատկապես նավթարդյունաբերության ոլորտում: Նշանավոր հայ նավթարդյունաբերողներից են Ալեքսանդր Մանթաշյանցը, Ղորղանյան եղբայրները, Լիանոսյան եղբայրները, Արկադի Տեր-Ակոպովը, թիֆլիսաբնակ վաճառականներ Բաբանասյանը, Կուկուջանյանը, գեներալ Արշակ Տեր-Ղուկասյանը, Պողոս, Հակոբ, Արշակ և Աբրահամ Ղուկասյան եղբայրները, Գրիգոր և Հովսեփ Թումայան եղբայրները, Առաֆեյան եղբայրները և այլն: Սակայն ոլորտում անմրցելի է Ալեքսանդր Մանթաշյանցը, որն իր շուրջը համախմբեց բոլոր հայ նավթարդյունաբերողներին՝ այսպես կոչված «հայկական նավթի» դերը մեծացնելով միջազգային շուկայում: 1889 թ. Ալ. Մանթաշյանցը և Մ. Արամյանցը հիմնեցին «Ա. Հ. Մանթաշյանց առևտրային տուն» ընկերությունը: Ալ. Մանթաշյանցի ֆինանսավորմամբ 1907 թ. կառուցվել է աշխարհում մինչ այդ ամենաերկար՝ 835 կմ երկարությամբ Բաքու-Բաթում նավթամուղը:

Այսպիսով՝ 19-րդ դարավերջին 20-րդ դարասկզբին Բաքվի հայ համայնքը լայն գործունեություն ծավալեց քաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտներում, սակայն 1917 թ. հեղափոխությունների հետևանքով Բաքվի հայ արդյունաբերողները կորցրին իրենց ունեցվածքը: Հայ արդյունաբերողների ժառանգության խնդիրը առ այսօր մնում է չլուծված:

**Տարոն Հակոբյան** (Հայաստան, Երևան)  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆՆԹԱՅՆԵՐՆ ԱՐՅԱԽՈՒՄ  
(1986–1992 ԹՎԱԿԱՆՆԵՐ)

**Тарон Акопян** (Армения, Ереван)  
ПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В АРЦАХЕ (1986–1992 ГГ.)

**Taron Hakobyan** (Armenia, Yerevan)  
POLITICAL PROCESSES IN ARTSAKH (1986–1992)

1980-ական թվականների կեսերից մտավորականության և ուսանողության շրջանում սկսեցին բարձրաձայն քննարկվել ԼՂԻՄ-ում տասնամյակներ շարունակ կուտակված քաղաքական, տնտեսական, մշակութային հիմնախնդիրները՝ մատնանշելով հայկական պատմական երկրամասը մայր Հայաստանին վերամիավորելու՝ վաղեմի իղձերի իրագործման ուղիները:

Քննարկվող հարցերին գործնական ընթացք ապահովելու նպատակով Արցախում ստեղծվեցին ընդհատակյա և ոչ ընդհատակյա կազմակերպություններ:

Թեմայի շրջանակներում ներկայացվելու են հետևյալ դրույթները՝

- Արցախյան շարժման նոր փուլի համատեքստում ստեղծված կազմակերպությունների դերն ու նշանակությունը,
- ներքաղաքական խմորումները և դրանց ազդեցությունը Արցախյան շարժման նոր փուլի ընթացքի վրա,
- ԼՂՀ հռչակման իրավաքաղաքական գործընթացները և քաղաքական ուժերի դերը պետական ինստիտուտների ձևավորման վրա:



**Տիրուհի Բայբուրդյան** (Հայաստան, Երևան)  
ԱՂԻՐԲԵՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ ԵՎ  
ՏԵՂԱԲՆԻԿՈՒԹՅԱՆ ԹԵԶԵՐԻ ԱՌԱՋՔԱՇՈՒՄԸ  
1940-ԱԿԱՆ ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ (Ի.Պ. ՊԵՏՐՈՒՇԵՎՍԿԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

**Тируи Байбурдян** (Армения, Ереван)  
СОЗДАНИЕ ИСТОРИИ АЗЕРБАЙДЖАНА И  
ПРОДВИЖЕНИЕ ТЕЗИСОВ АВТОХТОННОСТИ СОВЕТСКОЙ  
ИСТОРИОГРАФИЕЙ 1940-Х ГОДОВ  
(НА ПРИМЕРЕ И.П. ПЕТРУШЕВСКОГО)

**Tiruhi Baiburdyan** (Armenia, Yerevan)  
THE CREATION OF THE HISTORY OF AZERBAIJAN AND THE  
ADVANCEMENT OF THE THESES OF INDIGENOUSNESS  
IN THE 1940S BY SOVIET HISTORIOGRAPHY  
(ON THE EXAMPLE OF I. P. PETRUSHEVSKY)

Հետազոտության թիրախում խորհրդային պատմաբան  
և արևելագետ Իլյա Պավլովիչ Պետրուշևսկիի (1898–1977  
թթ.) 1940-ական թթ. Ադրբեջանի պատմության վերաբերյալ  
աշխատություններն են և դրանցում առաջ քաշված թեզերի  
քննությունը: Ի. Պետրուշևսկիի և նրա հետազոտությունների  
ընտրությունը պատահական չէ: Հետազոտության առարկա են  
դարձել հեղինակի «Государства Азербайджана в XV веке», «Из  
героической борьбы азербайджанского народа в XIII–XIV веках»,  
«Краткая история Азербайджана», «Великий патриот Ширваншах  
Ибрагим» աշխատությունները: Դրանցում Ի. Պետրուշևսկին  
առաջ է քաշում «ադրբեջանցի ժողովրդի» տեղաբնիկության,  
հերոսական անցյալի, պատմության հնեցման հակազիտական  
տեսակետներ, այնպիսիք՝ «հին ադրբեջանցիների» գոյության  
փաստը, ադրբեջանցիների մարական կամ աղվանական նախ-  
նիներ ունենալու թեզերը, աղվանական, հայկական, իրանական  
պատմական կերպարների ադրբեջանական լինելու թեզերը

և այլն: Ի. Պետրուշևսկին ադրբեջանական է ներկայացնում նաև այն պետությունները և իշխանությունները, որոնք առաջացել են իրանական Ատրպատականի՝ հետագայում արաբամուսուլմանական անվանմամբ Ազարբայջանի տարածքում: Ադրբեջանականացվելուց չի խուսափում նաև Շիրվանշահերի պետությունը: Շիրվանշահ Իբրահիմին որպես ադրբեջանական հերոս ներկայացնելով՝ գիտնականը նշում է, որ հայրենասեր շիրվանշահի մեծ ծրագիրն էր ազատագրել Ադրբեջանը օտար տիրապետությունից:

Ըստ Պետրուշևսկիի, ադրբեջանցիների ամենահին նախնիները մարերն են, կասպերը, աղվաններն ու այլ ցեղեր, որոնք ապրել են Ադրբեջանի տարածքում մոտ երեք հազար տարի առաջ: Պետրուշևսկին ադրբեջանական ծագում է վերագրում նաև պարսիկ պոետներին՝ Նիզամիին, Խաղանի Շիրվանիին և այլոց: Պետրուշևսկին առաջիններից մեկն է, որ գործածության մեջ է դնում խիստ վտանգավոր Հարավային Ադրբեջան եզրույթը, որը առաջին անգամ նա օգտագործում է այսպես կոչված «Հարավային Ադրբեջանում» Թավրիզի 7-րդ դարի իրադարձությունները նկարագրելիս: Այս և նմանօրինակ այլ դեպքերի ու հարցերի քննությանն է նվիրված ներկայացվող զեկուցումը:

**Քնարիկ Ավագյան** (Հայաստան, Երևան)  
ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ  
ՈՐՊԵՍ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ  
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԽԹԱՆ (2000-ԱԿԱՆ ԹԹ.)

**Кнарик Авагян** (Армения, Ереван)  
